

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ. Կարնոյ տնտեսական վիճակը
 ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ. Տասթայեվսքի և իւր գործերն..... Լ. Բ.
 ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. Արապկեր քաղաքը ՄԱՐԿՈՍ ՆԱԹԱՆԵԱՆ
 ԲԱՆԱՍՏԵՂՆԱԿԱՆ. Գաւառական երգեր (Գինեղգութիւնք Նաղաշ Յով-
 նաթանի) Հաւաքեց Յ. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ
 ԸՆԿԵՐԱԲԱՆԱԿԱՆ. Ընտանեկան և ամուսնական կաղմակերպութիւն յԱ-
 ռքտարարիս
 ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ. Արտաքին, Ներքին, Ազգային.....
 ՍԻՄՕՆԵ ԵՒ ՄԱՐԻ. (ԿԶԱՎԻԵ ՏԸ ՄՕՆԹԵԲԵՆ) Թարգմ. Մ. ՉՈՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս ԵՒ զաւառներու — տարեկան..... Կէս Օսման . ոսկի
 » » վեցամսեայ..... Բառ » »
 Մէկ Թերթին գինն է 60 փարայ
 Օ տ ար քաղաքաց համար տարեկան..... 12 Ֆրանք
 » » վեցամսեայ..... 6 »
 Թղթատարուծեան ծախք տարեկան..... Դան. արծ. 15
 Վեցամսեայ » » 7 1/2
 Մասիսի խմբագրութեան ուղղեալ ո՛ր ԵՒ է գրութիւն կամ նամակ պէտք է
 ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս լրագրաց
 Դպրութիւն, Նորատուրկեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԵՎԵԼՔ ԼՐԱԳՐՈՑ

1885

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 4 փետր.

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

ամիս	Լոնտրայի վրայ (պանդայի)	410	1/4
3	» » (վճռվելն)	409	7/8
3	» Բարի Լի » (պանդայի)	22	90
»	» » (վճռվելն)	22	97 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Քոնսուլիոն

Երէկ երեկոյ գոցուեցաւ	ԳՆԿՆ	9	23
Պօրսային գոցուելէն վերջը	»	9	22
Բերայի մէջ	»	—	—
Առաւօտուն բացուեցաւ	»	9	24 1/2
Բարձրագոյն գին	»	9	25
Նուազագոյն	»	9	24
Կէս օրին	»	9	24 1/2
Իւնիֆիէ Եգիպտական Գ. Լ.	»	76	5
Երէկ իրիկուն գոցուեցաւ	»	75	20
Բերայի մէջ	»	—	—
Այս առաւ բացուեցաւ Գ. Լ.	»	75	30
Կէս օրին	»	75	30
Հէվայէսիզ	»	25	—
Բէքօր գոնսուլիոնէ	»	—	—
» Իւնիֆիէի	»	—	—
Փոխառութիւն 1863	»	78	50
» 1865	»	60	75
» 1869	»	53	25
» 1873	»	47	—
Պօն աիւ Թրեղօր	»	22	75
Բոմբէի երկաթուղի	»	46	625
Օսմանեան առ Բրիտանիոյ	»	—	—
Բաժնէթուղթ Լաւրիօսի	»	70	—

ԲԱԺՆԵՏՈՐԱՐ

Սօսիէթէ Երեւոյ	Գ. Լ.	Անգլ. Լ. ր.	3	25
Բրէտի Երեւոյ	»	»	6	30
Պանք առ Գոնս.	»	»	5	40
Սօս. Շանսէ վայէօր	»	»	3	25
Թրամուէյ.	»	»	267	1/2

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	դր.	100
20 Ֆրանկոնոց	»	87 31
Անգլիական ոսկի	»	440 20
Բօլ Իմպերիալ	»	90 20
Բրիտից	»	54 20
Ռուսկի Թղթադրամ	»	8 55
» արծաթ	»	89 45
Ֆիօրին	»	9 2
Բէճ. արծ. (տարբ.)	»	408
Վեցնոց	»	402 35

Հինգնոց	»	402 35
Բէթալիք	»	99
Պրիմ	»	800
Թղթադրամ	»	3200

ԵՐԵՎԱՆԻ ՊՈՐՍԱ

Երեւան, 42 Փետրվար Ժամ 5 վայր. 45 երեկոյ

Անգլ. քոնսուլիոնէ գոցուեցաւ	»	99	9/16
Օսմ. բացուեցաւ	»	47	5/16
» գոցուեցաւ	»	47	5/8
Օսմ. փոխառութիւն 1865	»	44	7/8
» 1869	»	40	1/2
» 1871	»	74	1/8
» 1872	»	20	1/2
» 1873	»	9	5/8
Փոխառութիւն 1877	»	84	1/4
Պանք Օթօման	»	44	1/8
Ռուսական փոխառ. 73 (գ. Կ.)	»	97	5/8
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ)	»	68	1/8
» առանձն. (Բրիտիշ Էսթէ)	»	89	1/8
Տայրա Սանիէ	»	66	1/4
Տօմանիալ (փոխառ. Բօչիլա)	»	88	—
Հոնգարական պարտութեւ 1877	»	—	—
Փոխանակութիւն Բարիկի վրայ	»	—	—

Վ. Ի. Երեւան, 42 Փետրվար Ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	»	424	40
Օսմանեան երկաթուղի	»	22	70
Բարիզ, 42 Փետրվար Ժամ 3 վայր. 45 երեկոյ	»	—	—
Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0 բաց	»	409	65
» 3 0/0 բաց	»	81	35
Օսմանեան քոնսուլիոնէ բացուեցաւ	»	47	62 1/2
» գոցու. գ. Կ.	»	47	65
Միացեալ պարտք Սէրի Բ.	»	20	5/4
» Գ.	»	47	1/2
» Գ.	»	47	5/8
Օսմանեան երկաթուղի	»	47	50
» Բէթի Բաժնէթուղթ	»	—	—
Պանք Օթօման	»	608	75
Գրէտի Լիօնէ	»	548	75
» Ֆոնսիէ գ. Կ.	»	1335	—
Բաժնետոմս Լիօնի (Գուր. Կար.)	»	1270	—
Սուէզի ջրանցք	»	1917	50
Ռուսական 5 0/0 1877ի (գ. Կ.)	»	400	1/4
Իտալական Ռանթ (գ. Կ.)	»	97	75
Եգիպտական միացեալ գոց	»	346	25
Ապանիական (արտաքին) (գ. Կ.)	»	62	1/2
Բրիտիշ Էսթէ Բիւրք.	»	408	75
5 0/0 Հելլենական (գ. Կ.)	»	348	75
Զէք Լոնտրայի վրայ	»	25	25

ԲԱՐԻԶ ԲԵԻԹ ՊՈՐՍԱ

Փետրվար 41 Ժ. 10, վ. 45

Ֆրանս. Ռանթ, 4 1/2 0/0	»	409	58 3/4
Օսմանեան	»	47	60
Եգիպտական միացեալ	»	347	50

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34րդ ՏԱՐԻ

1885 ՓԵՏՐՈՒԱՐ 2

ԹԻԻ 3755

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՍՐԻՈՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

ԿՍՐԻՆ, 10 յունվար 1885

Տնտեսական վիճակը ըսելով կ'իմանա՞մ առհասարակ դրամական, առեւտրական և շահեցողական դրութիւնը, և մինչ բոլոր քաղաքիս վրայ կը խօսիմ, առանձինն կերպով ի նկատի կ'առնու՞մ արդայնոց տնտեսական վիճակը:

Այսօր բոլոր աշխարհի մէջ սովորական և ընդհանուր դարձած է խեղճութեան ողբը. և ոչ թէ միայն մեր գաւառական քաղաքներէն մին կարող կը լինի կարծեմ բարեյաջող և բարեճոխ տնտեսական դիրք մը աւետել: Ուստի միայն Կարնոյ թղթակցին սեւ բաղդը չէ որ կը պարտաւորէ զինքը խեղճութեան ողբով բերանը բանալ:

Կարին ժամանակով ընդհանուր կողմանցըս շահաստանը եղեր է, և իւր նախկին մեծահամբաւ կացութեան առաջին հարուածը ընդունելու է 1850 տարւոյ դաղթականութեան միջոցին, երբ 5000 հայ տուններէն միայն 14 հայ մնացեր են քաղաքիս մէջ: Այլ այդ դաղթականութիւնը արտաքին հարուած մը լինելուն և ոչ ներքին կործանում, Կարին կրցեր է վերստին բարգաւաճիլ, և տասը տարի չանցած թէ՛ վերագարձող բնիկներով և թէ՛ ուրիշ կողմերէ դաղթալներով 1500-2000 տուն հայ ժողովուրդ հաւաքուեր է: Հայ տունները յիշելնիս տնտեսական տեսակէտէն մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ Հայք ալ կարեւոր մասն ունին երկրին ճարտարութեան և արուեստի:

Ըստ այսմ, 1840էն վերջն ալ լաւ վիճակ մ'ունեցեր է Կարին, վասն զի մնացեր է միշտ կեդրոն վաճառաւաճութեան և կեդրոն իշխանութեան:

Իբր կեդրոն իշխանութեան՝ Կարին եղեր է երբեմն աթոռ բղէջխութեան կամ սպարապետութեան արեւելից, և վերջէն ալ եղեր է աթոռ այնպիսի ընդարձակ կուսակալութեան, որոյ գաւառներն են եղեր Հէքքեարի, Վան, Բաղէշ, Մուշ, Տէրսիմ, Գարահիսար, Չըլժըր և Կարս, և հետեւաբար այդ ամեն երկիրներն պարտաւորեալ յարաբերութեան մէջ եղեր են Կարնոյ հետ:

Իբր կեդրոն վաճառաւաճութեան՝ Կարին եղեր է միակ տեղին ուր կ'շտեմարանուին արտաքուստ բերեալ վաճառք, միակ շուկայն ուր կը գանուին ամեն տեսակ պիտոյք, միակ հրապարակ ուր կը կատարուին դիմաւոր առեւտուրք, միակ վայրն որ կ'ընծայէ շահավաճառի դիւրութիւններ: Այդ պատճառով մաս մը պարտաւորութեամբ և մաս մը սովորութեամբ բոլոր այն գաւառները զորս վերեւ յիշեցինք, անխափան կերպով Կարին կը զիմեն եղեր դրամով, երբ վաճառք կ'ուզեն ստանալ, և Կարին կը զիմեն եղեր ապրանքով, երբ ուզեն զանոնք դրամ ընել. և Կարին իբր լոկ միջնորդ մը՝ մեծապահած հարստութիւն կը հայթայթէ եղեր, միայն ուրիշին դրամը և ուրիշին ապրանքը ձեռքէ ձեռք անցունելով:

Վասն զի պէտք է գիտնալ թէ Կարին երբեք գործ կամ արդիւնք պտղաբերող տեղ չէ եղեր, ո'չ գործարաններ ունեցեր է, ո'չ արդիւնաւոր արհեստներ, և ո'չ ալ հողային կամ անասնային հարստութիւններ ինքն յինքեան ունեցեր է առեւտուրը և առեւտուրի մօտ եղող թեթեւ արհեստներ,

որը նիւթը կ'ստանան և անոր ձեւը փոխելով նիւթը կը վաճառեն իրենց թեթեւ աշխատանացը հետ. այդ տեսակէն են դերձակներ և կար կարողներ ասուի նկատմամբ, կօշկակարներ, մեծարարներ և կարուակներ կաշույն նկատմամբ, երկաթագործներ, դարբիններ և պայտարներ երկաթին նըկատմամբ, կաթսայագործներ, ձուլիչներ և կլայեգործներ պղնձի նկատմամբ. այլ ասուի կամ կտաւի ոստայնանիներ, երկաթ կամ պղինձ պատրաստողներ, և մեծ խաղախորդներ չէ ունեցեր Կարին. առեւտուրի շուկայ եղեր է նա և ո՛չ արհեստից գործարան:

Այգպէս լինելով՝ Կարին մեծ հարստութեան համբաւն ու վայելքն ունեցեր է միանգամայն. այլ տասն տարիէ այս դին, և մանաւանդ 1877 է ի վեր և այսօր չարունակ անկման կը դիմէ արեւելից այս հին շահատանը, և ամեն տարի նախորդին հետեւող դատմամբ՝ զգալի անկում մը կը ցուցնէ: Պատճառները թուենք:

Կարին այսօր լոկ նեղ և անձուկ նահանգի գլուխ է. իրենց նախկին նահանգէն անջատուելով յատուկ կուսակալութիւններ եղած են Հեքէթարի, Վան, Բաղէշ և Տէրսիմ: Շապին-Գարահիսար անցած է Սեբաստիոյ, Կարս և Ջըլաքը անցած են Ռուսիոյ. համեմատաբար անցելոյն հապիւ մի եօթներորդը մնացած է, և ընդարձակ յարաբերութիւնները կորուսած է Կարին:

Կարին չէ այլ եւս կեդրոն բանակի, վասն զի չորրորդ բանակին հրամանատարութիւնը փոխադրուած է յԵրզնկա: Հետեւապէս կորուսած է ընդարձակ իշխանութեան մը ներկայութեան օգուտները և անոր յառաջ բերած լայնածաւալ յարաբերութիւնները:

Կարին չէ այլ եւս կեդրոն շահավաճառի, որովհետեւ ոչ միայն ամեն կուսակալանիստ նահանգապետական քաղաքներ, այլ և իւր նահանգի կառավարչանիստ գաւառագլուխ քաղաքներ, զոր օրինակ Երզնկա և Բաբերդ, իրենց համար յատուկ շուկայ հաստատած են, և պէտքերին նոյն ինքն Պոլսոյ շուկային վրայ կը հայթայթեն, և մանրավաճառն ալ իրենք կը կատարեն և Կարնոյ շուկային դանկ մը անդամ չթողէ զսոս, հանդիպիլ իսկ չեն սխրտաւորի:

Կարին պատրաստ նիւթերու վրայ գործող արհեստովն ալ տկարացած է. զի ամեն քաղաք և աւան դերձակներ, կօշկակարներ և պայտարներ ևայլն. ձեւանալ սկսած են, որով հետզհետէ անկախ կը դառնան Կարնոյ արհեստաւորներէն:

Կարին կորուսած է իւր մեծամեծ առեւտուրն ալ որ անասնոց վրայ կը կայանար: Այդ առեւտուրը կը մատակարարէին Կարս ու Ջըլաքը, ստուգիւ հաշակեալ Շիրակայ ամբարքն: Այդ անասնոց տուր և առը Կարնոյ շուկային կը վերաբերէր: Հոն կուգային տուարածը Շիրակայ և Վանանգայ իրենց բազմաթիւ և ընտիր անասունները վաճառել, անդ կուգային Մոսկոյ և Ստրաքոյ գնողք որք կ'ստանային զայնս պատրաստ դրամով: Կարնեցի վաճառականը ժամանակին գնելով և ժամանակին վաճառելով մեծ շահ կ'ունենար, և դարձեալ գնոյ դրամ մ'աւ ի Կարին կը մնայր, զի անասունները վաճառողը Կարնոյ շուկայէն զգետ, կօշիկ և այլ պէտքեր կը հայթայթէր և այնպէս կը մեկնէր: Պալարեանք, Յիւսեանք և Խարաճեանք միայն իբր կէս միլիոն գլուխ անասուն կը փոխանցէին ամ ըստ ամէ. այսօր հազիւ թէ այդ թուոյն հարիւրորդը մնացած է: Անասուն գնել ուղղուեր Կարսի հրապարակը պարտաւորեմը են դիմել:

Կարին կորուսած է եւս արմուեսց չահը: Շիրակայ և Վանանգայ տիւղերահընչակ համարոց ցորեանն ու գարին ալ առական սահմանադիւնն անդին կ'անցնէին սակաւահաց դաւառներուն կարօտութիւնը լեցնելու. այդ վաճառականութիւնն ալ Կարնեցոյ ձեռքն էր. այսօր համարքն գլխովին սահմանադրուելը անցած են:

Կարին կորուսած է եւս պարսկական վաճառականութեան արդիւնքը. զի Պարսկաստանի վաճառականը ալ Կարինը իբր շահաստան կամ շահավաճառի հրապարակ կը ճանչնային. իրենց վաճառքը Կարին կը թափէին և իրենց գնելիքը Կարինէ կ'ստանային: Պարսկաստանի կարաւանները ատեն մը բոլորովին ալ լքին Կարնոյ ճանապարհը, այլ տարիէ մ'ի վեր է որ Ռուսիոյ կառավարութիւնը վաճառքներուն ազատ անցքը (Բրաւէթ) արդիւնք և նորէն Կարինէն ըսկըսան անցնիլ. այլ այսօր Պարսից ուղտե-

բամակները կ'անցնին Կարինէն, ինչպէս կ'անցնին սարին դուռէն. կ'ընեալ և վազեալ հակեր շրջան մը կ'ընեն և Կարնոյ մէջ ուրիշ բան չեն թողուր, բայց եթէ ուղտապանին հացադինը և ուղտին խմորոյն գինը:

Այդ մեծամեծ կորուստներուն ուրիշներ ալ կրնայինը յաւելուլ, որք արտաքին պարագայից փոփոխութենէն յառաջ եկած են. այլ հնար էր տակաւին Կարնոյ գոհացուցիչ վիճակ մը ունենալ եթէ ներքին պատճառներ ալ չլինէին զինքն բոլորովին հիւժեւելու:

Այդ պատճառներէն գլխաւորն է մըրցումը: Երբ ամենայն առևտուր կեդրոնացեալ է եղեր ի Կարին, կեդրոնացումը տեսակ մը մենավաճառ հաստատած է եղեր, որ մեծ չափ մը արտադրելով՝ միւս կողմէ ալ իրարու ենթարկեալ արհեստաւորաց մեծ շահէն բաժին կը թողու եղեր: Վաճառականը տեսակ մը մենավաճառի տէր է եղեր, որ սաստիկ չափ մը իրականացնելով, մանրավաճառին և արհեստաւորին չահու տեղ կուտայ եղեր, և սոքա ալ գործաւորաց և աշակերտաց մաս կը հանեն եղեր: Այսօր մենավաճառի ձեւը տապալեալ է, ամենէ յետին արհեստաւորը և ամենէ յետին մանրավաճառը կարող է մըրցում հաստատել վաճառականին հետ շահուն չափը կոտրելով, որովհետեւ ոչ մէկը պողաբերող կամ գործարանատէր, այլ ամենքն ալ միատեսակ առևտուր կամ գնավաճառ կատարող անձեր են իրենց դրամագլխոյն քանակէն միայն տարբերելով: Այս պատճառաւ շահերը տրկարանալով առևտրոյն նեղնալը ևս աւելի զգալի կը լինի:

Մըցման աստիճանը սաստկացուցած են Ռուսիոյ անցած դաւառներէն եկող դաղթական Տաճիկը, որը բոլորովին սակաւապէտ և բնութեամբ անխոնջ աշխատող և մտօք հնարիմաց մարդիկ լինելով, աստիճան մը ևս յառաջ տարած են նոր խանութպանաց և արհեստաւորաց մէջ ընդդիմահար մըցումը, որով կարծես թէ իւր վերջին ծայրն հասած է տարադէպ մըցման միջուղիչ հետեւանքը:

Այս պատճառաց խոջալի պարագայից աւելցնելու եմք, իբր պսակ խեղճութեան, նորասիրութեան և շուայլութեան նորամուտ ակտը: Քաւ յինէն այնպէս կարծել որպէս թէ մայրաքաղաքիդ կամ ուրիշ եւրոպական

քաղաքաց շուայլութեան հաւասար լինի Կարին. ո՛չ այսպէս. բայց շուայլութեան չափն ու մեծութիւնը ինքն յինքեան չչափուիր, այլ կարողութեան բազմատուութեամբ:

Կարնոյ հին նահապետական կամ դեղձկական պարզութիւնը անգլուտ հնութեանց կարգն տնցած է: Անցած են այն ժամանակները որ անկողին մը բազմոյ է եղեր ցերեկի և մահիճ գլխերի. նոյն ոճով և այլ կարասիք, նոյն ոճով և հանդերձք արանց, նոյն ոճով ևս արդուգործին կանանց:

Ատեն մը շահը շատ է եղեր գործոյն վրայ, և շահն առաւել է եղեր անձնական և տնական պէտքերէն. ամեն մարդ հարուստ է եղեր:

Այսօր շահը գործոյն վրայ քիչ է, այլ գործերուն շատնալովը, դարձեալ շահը առաւել է քան զանցեալն, բայց չբաւեր անձնական և տնական պէտքերուն, և այս պատճառաւ ամեն ոք խեղճ է եղած:

Գործերուն շատնալը յիշեցինք և իրաւամբ. վասն զի այսօր աւելի են վաճառականաց սենեակները, աւելի են մանրավաճառաց խանութները, աւելի են արհեստաւորաց կրպակները, մինչեւ մէկին երկուք եղած, և բացուած են եւս ատեն մը չգիտցուած տեղեր, սրճարաններ, ճաշարաններ, խաղարաններ և այլն: Ուրեմն գործերը շատցած են և այս անտարակոյս է եւս մաքսատուն հասնող հակերուն թիւէն:

Այլ եղած գործերը բաւական չափ չեն թողուր կըսեն և եղած շահն ալ պէտքերուն չբաւեր: Հրապարակին վրայ չընեն դրամին քիչնալը, վարկ ու յարդին բոլորովին կորսուիլը, սնանկներուն թուոյն շատնալը, կալուածներուն վարձագնոյն կոտորելիլը յայտնի նշաններ են այն խեղճութեան որ կը տիրէ այժմ:

Որչափ ցաւալի է այս պարագայն, այնչափ աւելի ցաւալի է ժողովրդեան ընթացքը, որ երբէք այդ տաղնապէն ելնելու խոհական միջոցներու չգիտէր: Չաշխատիր արդիւնաբեր նոր ձեռնարկներ ստեղծել, չհոգար տեղական պողաբերութիւնը բարգաւաճել, չմտածեր իւր գործուածները նախադասելով դրամը դուրս չհանել, չխորհիր աւելորդ ծախքերը կարճելով խնայողութեան հետեւիլ, այլ մանաւանդ ողբալի առատութեամբ կը շատնան արբեցութիւնք, կը

բաղմանան անառակութիւնը և կը յաճախեն անկարգութիւնը : Եւ մինչ արտաքին ձախողութիւնը ներքին խոհականութեամբ պէտք է դարմանուէին , ներքին և կամաւոր ձախողութիւնը ալ արտաքինոց չափը կը լրացունեն և քաղաքս իրապէս խղճալի վիճակի մէջ կը թողուն :

Տնտեսական խնդրոյն մէջ կառավարական մասն ալ հնար էր յաւելուլ , այլ այն յատուկ գրուելու չափ նիւթ կրնայ մատակարարել :

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՏՍԱԹԱՅԷՎԱՅԻ ԵՒ ԻՒՐ ԳՈՐԾԵՐԸ

« Ոճրն եւ Պատիժը » . — Գրքին հիմունքը . — Ուսանողն եւ իւր յետնորդը . — Ընկերային մեծ ըսկզբունք մը . — Թէ ի՞նչպէս կը ծնի ոճրին դադար . — Վաշխառու հին . — Դաբոյէտն՝ իբր բաղդատութեան եզր . — Մարդասպանութիւնը . — Երբ ի՞նչպէս ծագում կ'առնու խոստովանութեան դադար . — Թշուառութիւն եւ անպատուութիւն . — Զոհողութեան խնդրութիւնը . — Համբերատարութիւն . — « Երցունքները կը հոսն » . — Խոստովանութիւն եւ աքսոր . — Նոր արշալոյս . — Քանի մը խօսք գրքին վրայ :

Գ.

Մասին անցեալ թուով խոստացած էինք Տասնյայէվաքի մէկ նշանաւոր վէպին , Ոճրն և Պատիժը , համառօտութիւնը տալ մեր ընթերցողաց , քաղելով ֆրանսական Ժոհան Բէտտի Տէյա լրագրին մէջ վերջերս երեւցած գրադատական ընտիր յօդուածէ մը : Ըսած էինք թէ այդ վէպը , արուեստական աւելի կատարեալ գործ մը լինելով , աւելի թոյլ կուտար հասկնալ Տասնյայէվաքի հանճարը : Այսօր աւատիկ կը կատարենք մեր խոստումն :

*
* *

Ուսանող մը երկու պառաւ կանայք կ'ըսպանէ , արդարութեան կը յանձնէ ինքզինք , և Սլաւերիա կը զրկուի ահա՛ այդ վէպին յոյժ պարզ հիմունքը :

Ամբողջ գիրքն , որ երկուհատորէ կը բաղկանայ , նուիրուած է ցոյց տալու ոճրագոր-

ծութեան և ապա խոստովանութեան հոգեբանական ինչո՛ւն :

Ռաքոլնիքոֆ աղքատ ուսանող մ'է . թըլուառութիւնն հարկադրած է զնա Համալսարանէն ելնել : Իւր ապրուստը կը հոգան մայրն ու քոյրը , որք Բեղ ըստուրկի մէկ հեռաւոր դաւառակին մէջ կը բնակին . և իւր գորովն ու մանաւանդ հպարտութիւնը կը տառապի անոնց ճգանց ու զոհողութեանց վրայ մտածելով : Առանձնացեալ կեանք մը կը վարէ , չմասնակցելով իւր ընկերակցաց ո՛չ հանդէսներուն և ո՛չ հաճոյից , չա՛տ աղքատ , չա՛տ հպարտ , չա՛տ ամիսօրեալ ինքն իւր վրայ : Իւր նմանեաց դէմ՝ զգացած մէկ վայրագ արհամարհանքն իւր « խցիկ »-ին մէջ կը թողու զնա : Ամբողջ օրեր կ'անցունէ անդ , իւր բաղմոյն վրայ ընկողմանած , երազելով և չուզելով « աշխատիլ » : Այդ մեղութեան , իւր ցած ու նեղ սենեկին այդ հեղձուկ միջնորդին մէջ է որ կը ծնի հաստատուն դադարը :

Նախ՝ տարրամ և հեռաւոր խորհրդածութիւններ են որք ոճրագործութեան կոչում կ'ընեն : Երկուստարդ ին ուղեղը պաշարող չիփթ երազներուն մէջ յերեւան կուգայ , կը նկարուի , կը ճշդուի ընկերային մեծ սկզբունք մը .

« Բնութիւնն երկու դասակարգի կը բաժնէ՝ զմարդիկ . մին՝ ստորին , այսինքն սովորական մարդոց դասակարգն , որոց միակ պաշտօնն է իրենց նմանեաց հետեւիլ միւսը՝ վերին դասակարգն , որ կը պարունակէ նոր բառ մը լսելի ընել տալու ձիրքը կամ տաղանդն ունեցող մարդիկը : Ստորաբաժանմունք բնականաբար բաղմութիւ են , այլ երկու դասակարգերն իրարմէ բաւական որոշ հանգամանքներ կը ներկայացնեն : Առաջնոյն կը վերաբերին ընդհանրապէս պահպանողականք , կարգի կանոնի մարդիկ , որք հնազանդութեան մէջ կ'ապրին և կը սիրեն զայն : Ըստ իմ կարծեաց , նոյն իսկ պարտաւորուած են հնազանդելու , որովհետեւ իրենց ճակատագիրն է այդ և ստորնացուցիչ բան մը չէ այս իրենց համար : Երկրորդ խումբը միմիայն կը բաղկանայ այն մարդոցմէ որք օրէնքը կը բռնաբարեն , կամ կը ձգտին , ըստ իրենց միջոցներուն , բռնաբարել զայն : Իրենց ոճիրները բնականաբար յարաբերական են և փոփոխա-

կան ծանրութիւն մ'ունին : Ասոնցմէ չատերարդէն եղածին քանդումը կը պահանջեն յանուն այնմ որ պիտի լինի : Բայց եթէ իրենց դադարարին համար հարկ է արիւն թափել, դիակներու վրայէն անցնիլ, խղճի մտօր կրնան մին և միւսն ընել յօդուտ իրենց դադարարին . . . : Առաջին խումբը միշտ ներկային տէրն է, երկրորդը տէրն է ապագային : Մին զաշխարհ կը պահպանէ և անոր բնակիչները կը բազմապատկէ . միւսը զաշխարհ կը դզողէ և ի նպատակ կ'առաջնորդէ զայն : Երկուքն ալ իրաւունք ունին ապրելու, և աստի կը ծագի յաւիտեան պահպանութիւն, մինչեւ ցնոր Երուսաղէմ . . . » :

Ուրեմն ամեն ինչ ներելի է տարօրինակ մարդոց . իրաւունք ունին ոճիր գործելու : Բայց ո՞ր նշանն ալին յանդիման ցոյց պիտի տայ բնութեան այդ ընտրեալները . — Յանդիմութիւնը : Սպաննել հաճախողը միայն « մարդ մ'է բառին բուն նշանակութեամբ » :

Սկզբունքէ սկզբունք, Ռաքոնիքոֆ անձամբ այդ բանին փորձն ընելու փափաքին կը հասնի վերջապէս : Ոճիրն իրեն կը ներկայանայ իբր հարկաւոր փորձ մը, որ պիտի յայտնէ թէ « խոչընդոտէն անդին անցնելու զօրութիւն ունի՞ թէ ոչ », թէ « դողդոջուն արարած մ'է թէ իրաւունք ունի . . . » :

Այս մտածութիւններն արդէն իւր ուղեղին մէջ կը փոթորկին, երբ օր մը կ'երթայ հին ժամացոյց մ'եւ մատանի մը գըրաւ դնել Ելէնա Իվանովնա անուն վաշխառու կնոջ մը քով : Այդ կին բնազդական ատելութիւն մը կը ներշնչէ իրեն, առանց գիտնալու թէ ինչո՞ւ : Վաշխառուհայն տունէն դուրս ելնելէ յետոյ, Բրաբլէր (սրճարան) մը կը մտնէ և թէյ կ'ուզէ : Անդ, ուսանող մ'եւ սպայ մը կը տեսնէ, որք իրեն մօտ, սեղանի մ'առջեւ Ելէնա Իվանովնայի վերայ կը խօսակցին : Ուսանողը կը պնդէ թէ այդ ժլատ և սպուշ արարածն անարժան է ապրելու . « Ընկերական իրաւորդին մէջ ի՞նչ կ'արժէ, կը դոչէ, զառամեալ ու չարսիրտ ընդհայի մը կ'եանքը » . և կը յարէ թէ այդ վաշխառուհայն սպանիչը ծառայութիւն մը պիտի մատուցանէր մարդկութեան : Իւր ըրած այցելութեան և լած խօսակցութեան տարօրինակ զուգադիպութիւնը կը վրդավէ զՌաքոնիքոֆ : Այդ վայրկեանէն

իսկ, մարդասպանութեան խորհուրդը վերացական դադարարներէ դուրս ելած է :

Ամսոյ մը չափ, Ռաքոնիքոֆ այս քանին մտածումով պաշարուած կ'ապրի, որովհետեւ Բեդրսպուրկի փողոցներէն անցնելով ըրած երկար մենախօսութեանց մէջ չհամարձակիր ինքնիրեն խոստովանիլ այն մարդասպանութիւնն, որու վրայ կը խորհի : Ամեն վայրկեան կ'զգայ թէ սիրտը կը սեղմուի վատութեան երկիւղով :

Ոճրագործութեան նախընթաց անձկութիւններէն կը կռահէ արդէն զայնս, որք ոճիրէն յետոյ երեւան պիտի գան : Այդ տկարութեան գիտակցութիւնը կը չարչարէ նորա հպարտութիւնը : Զօրանալու համար, իւր մտաց առջեւ կը բերէ Նաբոլէոնի օրինակն և սա հալցումը կ'ուղղէ ինքնիրեն . « Եթէ Նաբոլէոն իմ տեղս լինէր, եթէ իւր ասպարէզն սխալու համար չունենար ո՛չ զՊոլսն, ո՛չ զՄեքսիկոս, ո՛չ Մոն-Պլանի անցքն, այլ փոխանակ այդ փայլուն գործերուն՝ մարդասպանութեան մը առջեւ գտնուէր, զոր կատարելով իւր ապագայն պիտի ապահովէր, պիտի մերժէր պառաւ մ'սպաննելու և անկէ երեք հազար ռուբլի դուղնալու գաղափարը » : Երկար ատեն ուղեղն այս « խնդրով » յոգնեցնելէ յետոյ, կը համոզուի թէ Նաբոլէոն չպիտի վարանէր . ի՛նք ալ չը պիտի վարանի :

Ուրեմն վերջապէս պատճառ մը գտած է իւր ոճրին : Պիտի սպաննէ՞, անոր համար որ Նաբոլէոն նոյնը պիտի ընէր եթէ իւր տեղը լինէր : Ո՛չ : Անգամ մ'եւս ինք իւր վրայ դառնալով, հարկադրուած է ճանշնալ թէ այդքան խղճահարութիւն անբուժելի անկարողութեան մը նշան է : « Աս ինձ ուղղած սա հարցումս թէ Նաբոլէոն պիտի սպաննէ՞ր այդ պառաւը, կը բաւէ ապացուցանել թէ Նաբոլէոն չեմ ես » :

Բանականութեան այդ մեծ խանդարման մէջ, հպարտութենէ կամ երկիւղէ երեւակայեալ այդ ամեն նրբութեանց մէջ տեղ, իրօք դիպուածն է որ ամեն բանի կ'առաջնորդէ : Ամենէն աննախատեսեալ պատահարք կը ներգործեն Ռաքոնիքոֆի վրայ « գրեթէ բացարձակապէս ինքնաբերական կերպիւ » : Ամեն երազներու և ցնորքներու ենթակայ է : Որչափ որ իւր որոշմունք աւելի բացայայտ կերպարանք մը

կ'զգենուն, ա'յնքան գամ քան զգամ կ'զգայ անոնց անհեթեթութիւնն և սոսկումը: Բայց այլ ևս իւր անձին տէրը չէ. կարող չէ՝ ետ քաշուիլ: Իւր մօրմէն նամակ մ'ընդունած է, որ կրակ լեցուցած է իւր հպարտութեան բոլոր տառապանաց վրայ: Վաշխառուհւոյն տուած նախապատրաստական այցելութեան մը մէջ, մտովին կրօնաւոր է ողբերգութիւնը. վերջապէս իմացած է թէ հետեւեալ օր, ժամ եօթնին, Խվանովնայ իւր տունը պիտի գտնուի: Այլ եւս բանի մը վրայ չմտածել. մնաց որ այլ եւս չէ կարող մտածել: «Յանկարծուստ իմն կ'զգայ իւր բոլոր էութեան մէջ թէ այլ եւս կամ չեմ և թէ ամեն ինչ վերջնականապէս որոշուած է:» Իւր մտային հիւանդութեան չարաշուք ճակատագիրն ի մարդասպանութիւն կը մղէ զայն, նախնի Բաղդին պէս անազորոյն:

Ռասքոլնիքովի կ'սպաննէ զվախառուհին, նաեւ այս վերջնոյն քոյրն որ վրայ հասած էր մինչդեռ ինք գործնէրը կը պարպէր և գիտէր կը խռովարկէր:

Ոճիրը գործէից յետոյ, ահեղ սարսափ մը կը դրուէ նորա հոգին: Դիպուածն այնպէս բերած է որ կրցած է Խվանովնայի տունէն փախչիլ առանց մէկէ մը նշմարուելու: Խելայեղ, գնացած է գողցուած առարկայները պահել ամայի տեղ մը, խոշոր քարի մը տակ: Ուրեմն նիւթական ապացոյց մը չպիտի կրնան հանել իւր դէմ: Բայց ոչինչ կարող է զայն ապահովել, ոչինչ հանդարտել նորա արհաւիրքն: Իւր գլխու պտոյան, չարաշուք գաղտնիարն յիշեցնող ամենափոքրիկ բառէն զգացած երկիւղները, իւր անհնարին ցաւերն բազմոցին վրայ, ուր կը նետուի «բոլոր մարմնովը գողգոջուն իբր պարտասեալ երկնար մը», իւր գառանցական ճգնաժամերն ա'յնքան կորովով և միանգամայն ճշդութեամբ ներկայացուցած է Տասթայեւիօքի, որ այդ էջերը պակուցիչ գրականութեան հրաշակերտը կրնան համարուիլ:

Այլ Ռասքոլնիքովի աւելի կը տառապի իւր ոճրագործութեան վատութեամբը քան տխարութեամբը: Այն պարագայն, յորում կը գտնուի, չահազրդիւ և տարօրինակ է ասոր համար որ թափուած արեան սոսկումը նորա ամենազոյզն տառապանքներէն մին

է: Տարախոյս չկայ թէ զլուրը պաշարած են այն քստմնելի տեսիլներն որք ամեն պատահական մարդասպանաց ուղեղը կը լընուեն: Անոնց նման ինք ալ կը կրէ քաշիկ խոշի խայիի խածուածքները: Իւր մօրը և քրոջը տեսքն, որք չեն գիտեր իւր ամօթը, վայրագ յուսահատութեան մէջ կը նետէ զնա: Բայց իւր ստեղծած արուեստական գոթովքին ամենէն անագորոյն տանջանքն իւր վատութեան գիտակցութիւնն է: Փորձառութիւնն ստացած է. յտակօրէն ցոյց տուած է իրեն թէ համարձակեալ զօրութիւն չունենալով, սպաննելու պարտաւ չունէր, և թէ բնու Նաբոլէոն չէ, այլ կ'ամենալու անկարող ցնորական մը:

Ինչպէս այժմ ջանահնար կը լինի այդ նուաստացուցիչ ճշմարտութիւնն յետոյ մղելու: Կը փորձէ տակաւին իւր ցաւերը թմբեցնել այն ամեն խնայողութեամբ, որք երբեմն շլացուցիչ երազներ կը պատճառէին իրեն և ոճիրը ցոյց կուտային իբր ճաճանչազեղ արշալոյսն մեծ կեանքերու: Այլ եւս չէ՝ կարող վերատին ձեռք բերել այդ երեւակայական պատկերները: Այն սկզբանց ազդեցութեան ներքեւ, որք երբեմն կը գիտովցնէին զնա, իւր երեւակայութիւնն անշարժ և սառուցեալ կը մնայ: Ռասքոլնիքովի կը նմանի Լէբեաֆէի մը, որուն վրայ յանկարծ չազդէր ափիոնը: Ոճրագործութեանէն առաջ արդէն գուշակած էր այդ մեծ յուսախաբութիւնը: Ասոր համար է որ, մարդասպանութեան կատարումէն անմիջապէս յետոյ, խոստովանելու դաղափարը ծագում առած է իւր մոտց մէջ, ինչպէս սպաննելու դաղափարը ծագում առած էր Լեբեաֆէին մէջ սպային և ուսանողին խօսակցութեան միջոցին: Ոստիկանութեան դրասեմեակն, ուր ինքզինք պիտի մատնէ, բնագլական և անդամադրելի կերպով կը քաշէ զնա, ինչպէս կը քաշէր Նէնա Խվանովնայի տունը:

Նթէ կը յապաղի ինքզինքը մատնել, պատճառն այն է որ կարծես հաճոյք մը կ'զգայ իւր խի տառապանքը տեսնելով, որպէս յոյժ եղբերեղական տեսարան մը: Իւր անձը երկուքի կը բաժնուի, և տարօրինակ հետաքրքրութիւն մը կ'զգայ ինքն իւր մէջ հետեւելով իւր բանականութեան խարխալումներուն. կը գիտէ իւր ողբեր-

գութեան ներկայացումը. իւր երկմտութեանց դէմ կը զայրանայ: Ար շնորհաւորէ ինքզինքն իւր ազդեցութեան երազանցուկ վերադարձներուն համար: Ար դատէ ինքզինքն և կը ծաղրէ: Այն վայրկեաններուն ուր իւր վշտաց մէջ խորասուզուած է, ինքն իրեն հետ կը կռուի. «Հնազանդէ՛, դողդոջո՛ւն արարած, և զգուշացի՛ր կոմիտէ, որովհետեւ բոլ գործիչ չէ այն»:

Տառապանաց այդ սէգ հեշտութիւնը կը մղէ զՌաքոնիքով դէպի ուրիշ կի՛ն մը, որ կ'ենթադրէ թէ իրեն չափ ապերջանիկ է: Սոնիա աղջկին է ալքօօլէն անասնացած և շուայտութեան մէջ ինկած նախկին պաշտօնատարի մը: Իւր մանկութեան միջոցին տանջուած է իւր մօրուէն, Գաթէրինա Իվանովնա, չարաբաստիկ կի՛ն մը, զոր թոք քախտն ու թշուառութիւնը կէս յիմար դարձուցած են: Օր մը, իւր մօրուին նախատանաց առջեւ որ կը յանդիմանէր զինքը թէ բան մը չէր շահեր, Սոնիա իւր մեկնոցը կը հագնի և բնակարանէն դուրս կ'ենէ:

«Ժամը ութն անցած կը վերադառնայ: (Սոնիայի հայրն է, Մարմէտալով, որ, զինով, գինեւան մը մէջ կը պատմէ սոյն սքեզատիւր պատմութիւնը): Ներս մտնելով՝ շտակ Գաթէրինա Իվանովնայի քով կ'երթայ և, լռիկ մնչիկ, առանց բառ մ'արտասանելու, երսուն բուպլի կը դնէ սեղանին վրայ, կնկանս առջեւ: Յետոյ, մեր կտաւէ կանաչ թաշկինակը կ'առնու (այս թաշկինակը ընտանեաց բոլոր անդամներուն կը ծառայէ), գլուխը կը ծածկէ և իւր անկողինին վրայ կը պառկի, երեսը պատին կողմը դարձուցած: Բայց իւր ուսերը և իւր մարմինը կը դողային յարատեւ սարսուռով մը... ես միշտ միեւնոյն վիճակի մէջ էի, գինով...: Եւ այդ վայրկեանին, տեսայ որ Գաթէրինա, ինքն ալ լռիկ մնչիկ, դնաց ծունր դնել փոքրիկ անկողինին քով. ամբողջ երեկոյն ծունդի վրայ անցուց, աղջկանս ոտներն համբուրելով և շուգեղով ոտքի ելնել: Յետոյ երկուքն ալ միասին ընացան, իրարու թեւերուն մէջ, գրկապնդ... երկուքն ալ... երկուքն ալ... այո՛... և ես միշտ հոն էի, գինովութենէս զգետնեալ...»:

Այդ օրէն սկսեալ, Սոնիա՝ Գաթէրինայի և փոքրիկ զաւակաց ապրուստը ձարած

է, և իւր հօր գինովութեան դրամն հայթայթած է: Այլ այդ նուաստութեան մէջ հաւատացեալ մնացած է միշտ և իւր հոգին սուրբ ու մաքուր է դեռ: Տասնեութ տարեկան է. իւր դէմքը նիհար է, ոսկորները ցցուած, այտերը խորունկ և դալկահար: Իւր մատները թափանցիկ ու նուրբ են մեռելի մը մատներուն նման: Աշխարհի եպեւրանաց առջեւ խոնարհ, վստահութիւն ունի երկնային արդարութեան վրայ և կ'ընդունի ամօթն ու վիշտն. Խեղդ, այո՛, ինքն ալ խեղդ է, բայց զոհողութեան խենդութիւնն ունի:

Ռաքոնիքով նշմարած է Սոնիայի չարաշարանքին բոլոր սոսկումը և զնա՛ ընտրած է հաղորդելու իւր ոճին խոստովանութիւնը. որովհետեւ իւր գաղտնիքը շատ ծանր է իրեն համար, ուժաթափ եղած է. ինչ որ ալ լինի, մտերիմ խորհրդակից մը հարկ է իրեն: Իւր տենդին մէջ պէտք ունի ըստփութեւն քիչ մը արգահատանօք, միանգամայն հպարտութեամբ կ'ուզէ որ իւր ուժիրը զարմացնէ մէկը: Գալով Սոնիայի, հասկըցած է որ Ռաքոնիքով յոյժ թշուառ է, և առանց գիտնալու թէ ի՛նչ է անոր վիշտը, առաջուց պատրաստ է իւր անձը նըւիրել անոր համար:

Բայց երբ մարդասպանը Սոնիայի տունը կուգայ ամեն բան ըսելու որոշմամբ, յետս կ'ընկրկի՝ խռովուն՝ այդ կնոջ գերմարդկային համբերատարութեան առջեւ: Ար կարծէր գտնել ի նա ապրտամբ մը, պատրաստ իրեն հետ նետուելու յափնէսկան պարէլին մէջ, և իւր ոչնչականութիւնը՝ կը խորտակի անդրդուելի հաւատքի մ'առջեւ: «Ինչո՞ւ համար, կը գոչէ, կը համակերպիս այդպիսի անպատուութեան մը: Հազար անգամ աւելի լաւ է ջուրը նետուիլ և մէկ անգամէն լմացնել: — Եւ անոնք ի՞նչ պիտի լինին» կը հարցնէ Սոնիա անոր վրայ յառելով նահատակի մը նայուածքը:

Վատարադիկ կնոջ յամառ համբերութիւնը կը զայրացնէ զՌաքոնիքով: Հաճոյք մը կ'զգայ չարութեամբ նախատելով Սոնիայի հաւատքները: Բայց այլ եւս խօսելու կարողութիւն չունի և հետեւեալ աւուր կը թողու սոսկալի խոստովանութիւնը: Յաջորդ օրը, խորհրդաւոր զօրութիւն մը Սոնիայի տունը կը տանի զնա և

այս անգամ իւր բերնէն կը խլէ ոճրին խոտ-տովանութիւնը : Այս յայտնութեան առջեւ, Սոնիայի առաջին աղաղակը արգահատանաց աղաղակ մ'է : «Բայց այժմ երկրի վրայ քեզնէ թշուառ մարդ չկայ :» — Այն ատեն Ռասքոլնիքովի կ'զգայ որ հոգին կը կակղանայ զգացումի մ'ազդեցութեան ներքեւ, զոր երկար ատենէ ի վեր այլ ևս չէր ճանչեր արդէն : չը փորձեր կռուիլ այդ սպաւորութեան դէմ : Երկու արցունքներ կը բղխին աչերէն և բիբերէն կը կախուին :

«Արցունքները կը հոսին, կը դոջ Ծառութ' լսելով Ջատիկի զանգակներն և օրհնեղաներն : Երկիր կը վերադառնամ :» Այսպէս ալ Ռասքոլնիքովի Երկիր վերադարձած է : Դեռ վերկուած չէ, այլ այդ վայրկեանէն իւր ազաւորութեան սկսած է :

Վարանումներէ յետոյ, վերջապէս կ'որոշէ ոստիկանական գրասենեկին սեմէն ներս մտնել : Այդ դատուի, չփորձեր ինքզինք պաշտպանել, այլ իւր բարի նախընթացներուն համար ութամեայ շղթայակալ աշխատութեանց միայն կը դատաւարտուի : Սոնիա կ'ընկերանայ նմա Սիւրբիոյ մէջ : Այլ Ռասքոլնիքովի սիրտն անդորրած չէ և տակաւին կը տառաւի չյաջողած լինելուն ամօթով : Նոյն իսկ Սոնիայի առջեւ, կը շառաղնի իւր դիտաւորութեան գործադրութեան մէջ վատ և տկար դառնում լինելուն համար, և այս պատճառաւ Սոնիայի հետ բրտութեամբ ու արհամարհանօք կը վարուի :

Այդ հիւանդանայ և հիւանդանոց կը տարուի : Դեռ հաղիւ ապաքինած, օր մը մինչեւ պատուհանը կ'երթայ քաջըշուելով և վանդակաձողերուն մէջէ կը տեսնէ զՍոնիա «որ բանի մը սպասել կը թուի :» Բայց հետեւեալ օր Սոնիա այլ եւս չ'երեւնար, ո՛չ ալ յաջորդ օրը : Ռասքոլնիքովի անձկութեան մէջ է : Վերջապէս հիւանդանոցէն կ'երէնէ : Վերստին բանտ մտնելով, կ'իմանայ թէ Սոնիա հիւանդ է : Իւր անհանգստութիւնը կը մեծնայ, և երբ վերջապէս կը տեսնէ զնա որ իրեն կը վերադառնար, այդ երկար բաժանումէն յետոյ, գոյնը նետած և նիհարած հիւանդութենէն, երկարօրէն իւր ձեռաց մէջ կը սեղմէ այն ձեռքը զոր Սոնիա իրեն կը ներկայացնէր վեհերոտութեամբ : Յետոյ, առանց բան մ'ըսելու, ջերմաջերմ արտասուելով, անոր

ոտից առջեւ կը նետուի և ծունդերուն կը փարի : «Ուղեցին խօսիլ և չկրցան : Արցունքներով լեցուն էին իրենց աչերը : Նրկուքն ալ հատած էին, բայց իրենց հիւանդոտ դէմքերուն վրայ արդէն կը փայլէր կատարեալ վերանորոգման մը, վերածնութեան մը շողշողուն արշալոյսը : Մէրը կը վերակենդանացնէր զանոնք : միոյն սիրտը կենսական անսպառելի աղբիւր մը կը պարունակէր միւսին որտե՛հ համար :»

Տասթայեվքի իւր վէպին վերջին տողերուն մէջ կ'ըսէ թէ այդ վերածնութիւն կրնար ուրիշ նոր պատմութեան մը նիւթ լինիլ : Այլ երբէք այս գիրքը գրած չէ :

*
* *

Սոյն համառոտութեան մէջ, հոգեբանական փառքն սմենէն աչքի զարնող մասերը միայն կրցինք նշանակել : Ձերկարելու համար, ստիպուեցանք մէկ կողմ ձգել յոյժ եղերերդական միջադէպերն և մեծին մէջ թողուլ երկրորդական կարեւորութիւն ունեցող անձերը, որք շատ անգամ տարօրինակ և հիւանդոտ, ուսումնասիրուած են են միշտ միեւնոյն ճշմարտասիրութեամբ :

Ըստ ընթերցողաց ումանց, այս միջադէպը և անձինք յոյժ բաղմամբիւ են : Տասթայեվքի գործերը չափազանց լեցուն և անկարգ են : Նրբէք կրցած չէ անոնց թառամներն յօտել և ծառուղիներն յարդարել ու կարգի բերել : Ռէքն և Պաքիժը «յոռի շինուածով» գիրք մ'է, ինչպէս կ'ըսեն այժմ : Գիշ հաւասարակշռութիւն կայ վէպին զանազան մասանց միջեւ : Արկնութիւններ և երկարաբանութիւններ կը դառնան անդ : Բայց այդ արուեստի սխալներն, այդ ձեւի անկատարելութիւնը ռուսական գրականութեան մը նման երիտասարդ գրականութեան մը յատկանիչն են :

Արդարեւ իրօք ռուսական է այն հզօր և միանգամայն բաղմամբն զորքը : Տասթայեվքի ճշգրիտ և կատարեալ տիպարն է այդ ցեղին, որ եռանդոտ երեւակայութեան մ'եւ նուրբ իմացականութեան մը տարօրինակ հակադրութիւնը կ'ընծայէ : Իւր Ռէքն և Պաքիժը վէպին մէջ կրցած է մեծ եւ ջղէ, մանաւանդ ջղէ էտիկներ ստեղծել և շարժում տալ անոնց, բայց նաեւ ժամ առ ժամ գրած է անոնց մտածմանց պատմու-

թիւնը : Այդու , երեւան եկած է բանաստեղծութեամբ և հոգեբանութեամբ շինուած հիւանդի վէպ մը , որոյ սքանչելապէս կը յարմարի Պէլինսքի ռուս քննադատին հրանարած սա բանաձեւը . «Արուեստն կիրառեալ ի կեանս» :

Լ. Բ.

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԱՐԱՔԿԻՐ ԲԱՂԱՔԸ

Տեղացւոց ոմանը Աբէ և Էբ կ'ստուգաբանէին այս քաղքին անունը , բայց Սարգանաքաղի մը դործ լինել չէին կարող հաստատել : Ոմանը Աբախէբ բառի աղաւաղում կը համարէին Արաքկիր անունը , բայց ճիշդ արաբական ձեռակերտ լինելուն հաստատ ապացոյց չկայ , թէպէտ և հին աշխարհագրութիւնը չնշանակեր այս քաղաքը և միջին դարու դործ լինելուն հաւանականութիւնն աւելի զօրաւոր ըլլայ :

Արաքկիր Մեծ ու Փոքր-Հայք իրարմէ բաժնող Եփրատայ աջ կողմը , այն է յարեւմուտս կ'իյնայ 6 ժամ հեռու ի նմանէ : Բաղէի շատ կը նմանի , շինուած լինելով նորա պէս երեք ձորերու մէջ ի զառիկողմանս բլրածեւ դարաւանդներու , բայց չունի նորա մէջէն հոսող գետին պէս մեծ ջուր , այլ հազիւ փոքրիկ մի առուակ : Տուները շինուած են , որպէս բոլոր ոչ-հարթ մակերեւոյթ ունեցող քաղաքաց , ամէկիւրեք տոնի ձեւով կարգ ըստ կարգէ բարձրացեալ սանդղանման : Տուներու ներքին երեւոյթ ու ձեւը աւելի Հալէպի ճաշակ կը ներկայացընէ : Ամէնն ալ քարակերտ են և յատակնին մեծաւ մասամբ ծածկեալ կա՛մ սրբատաշ ընտիր քարերով և կա՛մ տախտակով : Զուարճալի է տեսնել փողոցի դռնէն առաջին յարկ մը մտնել կարծած ատենդ յանկարծ երրորդ յարկի մէջ գտնել ինքզինքդ , փասն զի Արաքկիրի տուներն ընդհանրապէս այդ ձեւն ունին . երեւոյթ մի , զոր անհնար է տեսնել ի Վան , ի Վարին , յԵրիզա , ի Տիգրանակերտ , և այլ գաղտային քաղաքներ : Ճերմակ ծեփ , ապակափեղկ , առաստաղ , տախտակաւած և որ ըստ կարգին ի վայելչութիւն բնակարանաց , անսովոր չէ Արաքկիր : Նոյնպէս ընդհանրապէս սկսած է նաև փո-

խանակ տախտակն հին ձեւէ ծալապատիկ բաղմնելու յարմար փուռներու՝ նստարան և գահաւորակ իրենց պարսոյդայիւք : Տան միւս կահ կարասիքն ալ համեմատապէս աւելի բարեւայելուչ և յարգարուն են քան մեծ Հայոց մի շատ քաղաքաց , և այդ ամենը արդիւնք են պանդխտութեան որ իւր բաղմնադիմի վնասներով հանդերձ քաղաքակրթութեան ճաշակը զարգացնելու յատկութիւնն ալ ունի : Արաքկիրի յատուկ աւազանման սեւ հող մը որ իբր խիւս մածանութեւնով միապաղաղ և միակտուր քարի պէս կը պատապարէ այդ քաղաքին տանց տանիքներն՝ դերձ կացունելով հողածածուկ տուներու յատուկ կաթումներէ ու անձրեւահոսութենէ , կը լրացնէ Արաքկիրի աներու բարեւայելչութիւնն նաեւ արտաքուտ : Բայց միայն այսքանը չէ Արաքկիրի դեղեցկութիւնը : Ծուկայ , խանութ , տուն , գործարան , պարտեզ , այգի , ջրոց առուակներ , ծառ ու ծաղիկ , սև ու ձերմակ ծեփունք տանց կամ արտաքին երեւոյթք , սոքա ամէնը երբ խաչապատեալ խառնուին իրարու և ընծայեն մի տեսարան բաղմնատեսակ , բաղմնամոյշ , զոր դժուար չէ երեւակայել , ահա այդ է Արաքկիրի տեսիլն և իբր այդ շատ աւելի գեղեցիկ կը թուի անցորդաց քան այն քաղաքներ որ թէպէտ աւելի այգի ու պարտեզ ունին , բայց առանձին են նոքա բուն քաղքէն , ինչպէս Վանայ , Բալուսայ , Քարբերդու , Տիգրանակերտու ևն : Տանց և պարտիզաց այս խառնուրդը դարձեալ ի Բաղէ և եթնմանն ունի :

Քարբերդու իրաւասութեան ներքեւ գաւառակ է (գալմագամութիւն) Արաքկիր , և յատուկ առաջնորդական վիճակ եպիսկոպոսութեան : Բնակչաց թիւը ըստ վերջին վիճակագրութեան՝ կը համարուի լինել իբր 9000 հայ , (որոց 700 բողոքական , 125 կաթոլիկ) և 3500 թուրք . տարբեր աղբուրութիւն չկայ : Առանց ի մօտոյ տեղեկանալու չէր կարելի ինձ հաւատալ թէ այսքան հայ կար այս քաղաքին մէջ որ դժբաղդաբար շատ քիչ ծանօթ է հանրութեան : Թէպէտ քաղաքի մէջ Հայք մեծամասնութիւն կամ հաւասարութիւն ունին Թրքաց , բայց 76 գիւղերու մէջ որ կը պատկանին Արաքկիրի , խիստ աւելի մեծ է Թրքաց մեծամաս-

նութիւնն: Եւ այդ գիւղեր՝ նման Գ. Հայոց գիւղերուն՝ են յոյժ գեղեցկաշէն, բարեյար-
գար և վայելուչ քան Տուրուբերանի և
Վասպուրականի գիւղօրայս: Գոցա անուանց
մէջ կան որ հայերէն են, ինչպէս, Անջրդէ, Ս.
Աշոտայ, Ամբարկայ, Բաղնիք, Վաղէշն
են: Բոլոր հողը սեպհական է գիւղացւոց և
աւատականութիւնն իսպառ անհետ եղած է
Արաբկիրու սահմաններէն, մինչ ընդհակա-
ռակն խորապէս կը տիրէ գեռ իւր շրջակայ
երկիրները, ի Քարբերդ, ի Չարսանձաղ և
ուրեք ուրեք նաև ի Չմէկածաղ:

Բայց Արաբկիր շատ անգամ կը կա-
րօտի արտաքին արմատաց երկու պատ-
ճառաւ, 1⁰ զի հողը շատ յարմար չէ մշա-
կութեան, 2⁰ զի մշակող գիւղացիք մեծ մա-
սամբ անյարմար են եւ այնչափ ընդունակ
չեն այդ արուեստին: Եւ այդ պատճառաւ
տասանորդատուրքը աւելի չէ եղած երբէք
քան 5000 ոսկի, և այդքան՝ երբ վարձակա-
լաց ծախուած է իսկ կառավարութեան ուղ-
ղակի ժողոված ատեն 2500 է ոչ աւելի եղած
է: 76 գիւղերէ այսքան միայն հասոյթ խիստ
քիչ է բաղդատմամբ այլոց: Ոչխարատրոց
ուղղակի կառավարութեան ձեռամբ դան-
ձըւած միջոցին հազիւ 700 ոսկի և վարձա-
կալաց վաճառման պարագային 1200 ոսկի
լինելն ալ բաւական է ցուցունելու թէ Արաբ-
կիր նշանաւոր չէ նաև ի խոշնարութեան
թեան:

Վառապարական մնացեալ հասոյթն կը
հաշուուին 1500 ոսկի զինուորական տուրք,
800 վաստակաւոր (թէմէթիւ), 2500 կալ-
ուածատուրք, 200 դատական:

Այդ դումարներէն կը հասկցուի որ
հայաբնակութեան բոլոր ծախքեր հողալէ զինի
բաւական ալ հասոյթ կ'առաւելու: Այս
պատճառաւ Արաբկիրցիք փափաք և իրաւ-
ունք ունենալ կը յայտնեն իրենց քաղաքին
ի դաւառ (միւթէսարդֆութիւն) վերածման:
Բայց յայդմ էին յաջողած տակաւին, թէ-
պէտ և դեռ մօտ ատեններս հեռագրական
և թղթատարական կայան ունենալին փոքր
ինչ միւթիարութիւն կը համարին, մինչ ա-
ղանցմէ ալ զուրկ էին քիչ ժամանակ ա-
ռաջ:

Երբ տակաւին եւրոպական լաթեղէնք,
տպածոյք, ասուեայք, այժմուս չափ չէ-
ին ողողած Թուրքիոյ հրապարակներն,

Արաբկիր նշանաւոր էր ի մանիսագոր-
ծութեան. ուստի տարին ոչ պակաս
քան 50,000 ոսկի կը շահէր, ունենալով
1000է աւելի հոր ոստայնանկութեան մա-
նիսայի: Իսկ այժմ մեծապէս ընկած է այդ
միակ վաստակն Արաբկիրցւոց, որք աւելի ևս
պարտաւորեալ են պանդխտութեան դիմե-
լու: Մասնաւոր դոհութիւն կ'ըզայ մարդ-
լեւել թէ կանայք էին և են գլխաւորա-
պէս մանիսա գործողներն, մինչ բազում քա-
ղաքաց կանայք մեծ մասամբ պարագորդու-
թեամբ կ'անցնեն իրենց օրերը թէպէտ ա-
մէն տեղի դեղջիւղէք կ'աշխատին հակա-
ռակ քաղաքացուհեաց:

Արաբկիրի մէջ կրթական վիճակը գըլ-
խաւորապէս այն պատճառաւ տխուր է որ
հասնողը մասնաւոր վարժարան մը բացած
է առանց ձեռնահասութիւնն օրինաւոր
մարմնոյ մը հաստատել տալու: Ժողովուր-
դը իբր 500 ոսկի դպրոցական թոշակ կը
վճարէ թէպէտ, որ քիչ դումար չէ բաղ-
դատմամբ այլ քաղաքաց, բայց մեծ մա-
սամբ ի զուր, զի այդ մասնաւոր վարժարա-
նոց Հիմնադիր-Տնօրէնք շատ անգամ ոչ ինչ
դիտեն կամ կարեն արդիւնաւորել: Բացա-
ռութիւնն հազուադիւրէ: Միթէ ներելի՞ է
կրթութեան գործը թողուլ այսպէս որ ամեն
մարդ ըստ հաճոյս գործածէ: Երկրին դա-
ւառական վարչութեան իրաւասութեան
ներքեւ միայն մի վարժարան կար «Լուսմնա-
բան» անուամբ, բաւական յառաջադէմ-
այն ալ խանդարուած էր իմ հոն պատահած
ատեն կուսակցական կուիներու երեսէն:
Մասնաւորապէս կ'արժէ յիշատակել Սաղա-
թիէլեան մեծանուն ազգայինն որ 500 ոսկի
դրամագլխով նախարկութարան մը բացած է,
որոյ ծախքը այդ դումարին մշտական տո-
կոսով կը հոգացուի:

Ազգային վիճակն ևս տխուր է և գլխա-
ւորապէս Առաջնորդին բացակայութենէն
ի վեր անկերպարան են վարչական՝ բոլոր
մարմինները սակաւ բացառութեամբ: Ժո-
ղովուրդը սահմանադրապէս չորս թաղերու
բաժնուած է չորս եկեղեցիներուն թուով,
որոց մին, Մայր եկեղեցին յանուն Ս. Աստ-
ուածածնի, շատ մեծ ու փառաւոր է:

1885, յունի 15

Վան

ՄԱՐԿՈՍ ՆԱԹԱՆԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Գ Ա Ի Ա Ռ Ա Կ Ա Ն Ե Ր Գ Ե Ր

ԳԻՆԵՐԳՈՒԹԻԻՆՔ ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆԻ

Նաղաշ Յովնաթան 16րդ դարուն մէջ
ապրող հայ երգիչ մ'է արեւելեան՝ Հայոց
աշխարհներուն մէջ, Փշուր մը ասոր երգած-
ներէն ձեռք բերինք հին ձեռագիր երգարանէ
մը, որ կը կարծենք դեռ լոյս չէ գտած ար-
տագրութեամբ կամ մասնաւոր հրատա-
րակութեամբ հայ բանասիրաց կողմէ։ Հայր
Ալիշան կը ճանչնայ այս Նաղաշ և ճանչ-
ցուցած է վայն իւր սանիկ Հայկակին։ Կ'ե-
րեւի սակայն մեծանուն բանասիրին իւր
իսկ գիտնալն ու ճանչնալը Յովնաթան,
չանցնիր անդին անունէ մը կամ շատ շատ
անոր թողած հատակոտորներէն աւելի բան
մը։ Որպէս զի օր մը կարեւոր ամբողջու-
թեան մը հանդիպէինք, ինչպէս Նաղաշ Յով-
նաթանի գործերն նոյնպէս ուրիշ անուամբ
միայն ծանօթ կամ անծանօթ հայ բարտից,
երգչաց և վիպասաններու, սկսած ենք ետե-
ւէ ինիլ ասոնց փշրանքներէն ձեռուրնիս
անցածը հրատարակութեան տալու, որով
կարելի է ծառայու թիւն մը մէջ մատուցա-
նենք յետոյ հայ գրականութեան այս աս-
պարիզին կամ ճիւղին։

Ա.

Յորժամ եղեւ գարուն արեւ ծագեցաւ,
Հարաւ հողմն փչեց, սառն հալեցաւ.
Երկիր կանանչցաւ, ծառն ծաղկեցաւ,
Խմենք գինի, բան է, նա Աստուած շինէ։

Որ եղբարքն նստին ծաղկեալ ծառի տակ,
Ձեռացներն դ'նին՝ կարմիր և յստակ.
Թասին մէջն անկանի՝ ծաղիկ սպիտակ,
Խմենք գինի, բան է, նա Աստուած շինէ։

Վաղն ոչ դիտես թէ զի՞նչ ծնանի,
Մարդոց կեանք՝ վայրի ծաղիկ նման.
Որ տոսօր բացուել է վաղիւ անցան,
Խմենք գինի, բան է, նա Աստուած շինէ։

Նոր գարուն, նոր արեւ, Զատիկ շնորհազարդ,
Այսուհետեւ բացուի մանուշակ և վարդ.
Հայն թռչնոց 'ւ բուլբուլի լսէ ամեն մարդ.
Խմենք գինի, բան է, նա Աստուած շինէ։

Առէք կարմիր գինի և լցէք թասով,
Բերիք թայցայ գառ սէնի սարքօշով.
Ղարլի փլաւ ձգէք մեխակով, նշով.
Խմենք գինի, բան է, նա Աստուած շինէ։

Թող ջիւմնն տեղ նստէք, ջուր լինի և խոտ,
Կարմիր գինի խմէք մէկըմէկի մօտ.
Միմիանց տուէք ծաղիկ, վարդ անուշահոտ,
Խմենք գինի, բան է, նա Աստուած շինէ։

Այլ և պարկեշտութեամբ խմեն է հալալ,
Ո՛չ կռուիլ, ո՛չ արբել և ո՛չ բարկանալ.
Ուրախութեամբ ըմպել, սիրով զուարճանալ,
Խմենք գինի, բան է, նա Աստուած շինէ։

Նիստ քո մեղքերն լաց Նաղաշ Յովնաթան,
Աշխարհս անցաւոր է, չէ մնացական.
Դուք կերէք, խմեցէք, եղբարք պատուական,
Եւ օրհնեցէք զԱստուած միշտ եւ յաւիտեան։

Բ.

Այսօր ցնծամք պարելով,
Գինի խմենք խնդարով.
Աստուծոյ փառքս տալով.
Այսօր ուրախութեան օր է,
Թասերն կարգաւ շարէ։

Սեղանս լի է բարեաւ,
Յեղ և ցեղ անուշ գինեաւ.
Գառն եւ հաւեր ու փլաւ.
Այսօր ուրախութեան օր է,
Թասերն կարգաւ բոլորէ։

Սեղանս է բարեշար,
Եղբարք նստած շարեշար,
Որպէս թագ մարգարտաշար.
Այսօր ուրախութեան օր է,
Թասերն կարգաւ բոլորէ։

Սեղանս է բարելի,
Պարսպլէն պատուելի.
Քան զմէկը սիրելի.
Այսօր ուրախութեան օր է,
Թասերն կարգաւ բոլորէ։

Այսօր նման է վարդի,
Եւ ծառոց ծաղկազարդի.
Սերտն բացուի շատ մարդի.
Այսօր ուրախութեան օր է,
Թասերն կարգաւ բոլորէ։

Դուք որպէս աստղ պայծառ էք,
Վարդի կնդրուկի հոտ առէք,
Քաղցր ձայնիւ բարբառեցէք.
Այսօր ուրախութեան օր է,
Թասերն կարգաւ բոլորէ։

Տապալկեցէք կաքաւ և լոր,
Մէկ մէկ կարաս բացէք դուք նոր,
Տօլու խմելու տուէք խնձոր,
Զիման լինի կանաչ խոտ,
Մանուշակ սուամուլի հոտ,
Մէկ խմենք Նազաշի մօտ,
Քան սաղ ածէք խմի,
Երբ մեռան, դուք զողորմի:

Գ.

Եկայք այսօր ժողովեցէք, ընկերք միաբան,
Պարկեշտութեամբ բազմիլ սեղան, եղբարք պատ-
ուական.
Զուարճանալով արասցուք սէր և բարեկենդան:
Ուրախութեամբ և խնդալով,
Խմենք գինի ցնծալով:

Փառք Գրիստոսի, որ սեղանոյս արար արժան,
Թընկեր թասերն շարեշար գինի զանաղան.
Մէկզմէկի մօտ խմեցէք, հոտ առէք մազան:
Ուրախութեամբ և խնդալով,
Խմենք գինի ցնծալով:

Զեր առաջեն կանանչ պաղչայ, ծաղկունք եւ
չիման,
Աստուածազարդ սեղան եղեալ աչաց յանդիման.
Անցեալ օրին օր չի հասնի, կ'եղնիք փօշիման:
Ուրախութեամբ և խնդալով,
Խմենք գինի ցնծալով:

Պարտինք աշխատաւորաց ողորմի տալ մէկ բերան,
Տաղեր կանչել, կարաս բանալ և կախել պէլրան.
Աշխարհիս մալըն կու մնայ աշխարհիս վրան:
Ուրախութեամբ և խնդալով,
Խմենք գինի ցնծալով:

Ի ձեզ աղաչէ՛ հօդ և մոխիր Նազաշ Յովնաթան,
Թասըն խմէք, մէկ էլ լցէք և տուք իւրեան.
Տէրն Գրիստոս զմեզ օգնէ յաւուր յայտնութեան:
Ուրախութեամբ և ցնծալով,
Գինի խմենք խնդալով:

Գ.

Ի միասին ամենեքեան,
Եկայք, եղբարք իմ սիրական.
Ելցուք այսօր ի բուրաստան,
Ուրախութեամբ ուրախ լիցուք.
Ուրախ, ուրախ ծափս հարցուք,
Պարգեւողին փառս տացուք:

Յարազուարճ սրտիւ բերկրական,
Նստցուք ի ծաղկունս զանաղան.
Յնծացուք մեք յաւուրս գարնան,
Ուրախութեամբ ուրախ լիցուք.
Ուրախ ուրախ ծափս հարցուք,
Պարգեւողին փառս տացուք:

Ապա և անտի յարուցեալ,
Ի մէջ բուրաստանին շրջեալ.
Առ ոտս ծաղկանաց բազմեալ,
Ուրախութեամբ եւ ցնծալով,
Գինի խմենք խնդալով:

Կազմեցուք զբարելի սեղան,
Արբցուք գինի անապական,
Երգեսցուք զտաղ, շարական:
Ուրախութեամբ և ցնծալով,
Գինի խմենք խնդալով:

Ոստս ի վարդենեաց հատցուք,
Ընդ այլոց ծաղկանց փնջեսցուք.
Հետ միմեանց շնորհեսցուք:
Ուրախութեամբ և ցնծալով,
Գինի խմենք խնդալով:

Բերկրեսցուք հոգւով եւ մարմնով,
Ի մէջ այգւոյն զբօսնելով.
Զանուշ ծաղկունս հոտոտելով,
Ուրախութեամբ եւ ցնծալով,
Գինի խմենք խնդալով:

Հաստեց

Յ. ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ

ԸՆԿԵՐԱԲԱՆԱԿԱՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԱՄՈՒՍԵԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆ ՅԱԻՍՏՐԱԼԻԱ

Ժամանակակից Աւստրալիացւոց ընտանեկան եւ
ամուսնական նախնական ձեւերը. — Խմբական ա-
մուսնութիւնը. — Զանաղան ցեղերը միմեանց հետ
կապող ընդհանուր ամուսնական կազմակերպութիւ-
նը. — Միակնութեան եւ հայրական սկզբնաւորու-
թեան նախադրոյն զարգացումը Կուրնայ ցեղին մէջ.
— Յիշեալ յատկութեանց յառաջագոյն գոյութիւն
ունենալը բացատրող կարծիքը:

Նախապատմական անծանօթ շրջանի
մէջ, երբ նախնական մարդիկ կը թափա-
ռէին կոյս անտառներ, համարեա զուրկ էին
լեզու ունենալէ. հազիւ տարրական բառե-
րու դործածումը գիտէին, անկարող էին
լրենց բնազդումը բարոյական օրինաց ներ-
քեւ դնել, և սեռական յարաբերութեանց
մէջ պարտաւորութեամբ էին անտանական բը-
նազդման հետեւիլ: Զարգացման այդ տա-
րածամ շրջանի մէջ, մարդկային գերդաս-

տանի ընտանեկան մերձաւորութեանց և յարաբերութեանց կապերու սկզբնական սլայմանները հաւանականաբար նոյնն էին, ինչ որ այժմ անասնոց բարձրագոյն դասի մէջ կը տեսնուին: Բարոյական սահմանը տակաւին գոյութիւն չունէին ամենեւին, և եթէ առժամանակեայ սլայմանաւորեալ ամուսնական կապեր կը հաստատուէին, մի-միայն բնազդական և գոգոչ ձգտմանց պատճառաւ տեղի կ'ունենային: Թէեւ իրաւի ներկայ ժամանակը մինչև անգամբուն նախնական ցեղերու մէջ ալ չենք հանդիպիր այս սեռական փոխադարձ յարաբերութեանց սեղմիչ օրինաց բացակայութեան, բայց ինչ որ ալ լինի, անասնական շրջանը բնականաբար իւր ազդեցութիւնը թողած է ընտանեկան կազմակերպութեան վրայ: Այժմ նոյնպէս տակաւին կան վայրենի ցեղեր որոնք սեռական յարաբերութեանց կողմանէ անասուններէ ամենեւին չեն զանազանուիր. չեն ճանաչեր արեւական ազգակցութիւնն և չեն վախնար արիւնապղծութենէն: Պատմական շրջանի մէջ կը տեսնենք որ Արաքսացոց, Նգիսպտացոց, Պարսից և այլ բազմութիւ ազգաց մէջ եղբայրը քրոջ հետ պսակելը սովորական երեւոյթ մ'էր. այժմ ալ քանի մը երկիրներու մէջ, ի Մատաքասկար, յԱփրիկէ՝ Կապոնի եզերքը, ի Հնդկաստան՝ Կատեակ և Վէտ ցեղերու և ի Թանասերիս՝ Կարեն ցեղին մէջ տակաւին կը շարունակուին նոյն սովորութիւնները: Մինչև անգամ մեր ժամանակները, կ'ըսէ Ժիրո-Թէյլոն, ճանապարհորդը երկրագունտի քանի մը հեռաւոր վայրաց մէջ մերձաւոր արեւակիցներու ընտանեկան գայթակղեցուցիչ կապերու ակնատես եղած են. այնպէս որ ճանապարհորդներէն ոմանք այս վայրենիներն զիրենք շրջապատող անասնոց հետ կը համեմատեն. երբեմն նոյն խի վայրենիները գլխաւորաբար սոյն օրինակ բաղդատութիւն կ'ընեն, «Սեռական յարաբերութեանց մէջ մեր ցեղը մեզ շրջապատող ծովային ջրշուններու օրինակին կը հետեւի» ըսաւ անգամ մը Ալեքսիս Կոկեաց բնակիչներէն մին՝ Վիլիոնարի մը, երբ այս վերջինս Տիրոջ խօսքը կը քարոզէր նմա...: Ինչպէս գիտենք՝ բարոյական գաղափարները իրենց մէջ աններելի ոչինչ կը պարունակեն, և այն բարոյագիտութիւնն, որուն կը հե-

տեւի վայրենին իւր սեռական կեանքը կանոնաւորելու ու ընտանեկան ծագման առաջին հիւրը հաստատելու ժամանակ, շատ անգամ բոլորովին հակառակ է քաղաքակիրթ մարդոց միւսնոյն խնդրոյ մասին ունեցած գաղափարներուն, թէև ինչպէս վայրենի, նոյնպէս և քաղաքակիրթ մարդու մէջ երբ անգամ մը բարոյական սկզբունքները ժառանգաբար իւրացուցուած և մարմնացած են, այլ եւս եթէ հիմնովին ալ հակառակ լինին միմեանց, այսու ամենայնիւ հաւասարապէս սրբազան պարտականութիւն կը համարուին նոցա համար:

Սեռական յարաբերութեանց սկզբնական կազմակերպութեան բնական օրինակն, այն կազմակերպութեան՝ որ մարդկային ընկերականութեան երբեմն անասնական շրջանակի մէջ լինելը կ'ապացուցանէ, Աւստրալիոյ ցեղերուն մէջ նկատուած «խմբական ամուսնութիւնն» է: Այս ազգաբանական նշանաւոր երեւոյթի ընդարձակ նկարագիրը Ժիրո-Թէյլոնի «Մագուան ընտանեաց եւ ամուսնութեան» նոր հեղինակած գրքի մէջ կը գտնենք:

Ժիրո-Թէյլոն հետեւեալ կերպով կը նկարագրէ իւր գրքին մէջ.

Աւստրալացիները սեռական յարաբերութեանց համար ունին խմբական եղանակաւ կազմակերպեալ օրէնք մը՝ որու զօրութեամբ բոլոր ցեղերը առ սակաւն երկու սեռական դասակարգի կամ երկու ամուսնական մասերու կը բաժնուին. միւսնոյն դասակարգի անդամոց մէջ ամուսնական փոխադարձ կապ հաստատելը բացարձակապէս արգիլեալ է, այլ տարբեր դասակարգերու անդամոց մէջ միայն թոյլատրուած է:

Միւսնոյն դասակարգի պատկանող ցեղերու բոլոր այր մարդիկը հաւաքական ամուսնութիւն կը կազմեն միւս դասակարգին պատկանող ցեղերու բոլոր կանանց հետ: Այսպիսի բաժանմունքներ, կամ դասակարգեր իւրաքանչիւր ցեղի մէջ շատ կամ քիչ կը լինին, նայելով թէ նա իւր հանրային զարգացմամբ ո՞րպիսի աստիճանի վրայ կանգնած է. բայց այդ կազմակերպութեան ամենէն պարզ եղանակը երկու դասակարգ կը ներկայացնէ ցեղերու կրկնաբաժանումը, ինչպէս կը տեսնենք ի Վիլիսյէնս և Մոն-Գաբէի շրջակայքը բնակող ժողովրդոց մէջ: Այդ

կողմերու ցեղերէն մէկը, զոր օրինակ, երկու դասակարգի կը բաժնուի. առաջին դասակարգը Կոմիւններ, երկրորդը՝ Կոոպէներ. ցեղի իւրաքանչիւր անդամն այն դասակարգի անունը կը կրէ՝ իւր վրայ օրուն կը պատկանի. իգական սեռն նշանակելու համար այդ անունն տակը «Գոր» մասնիկը կ'աւելցնեն։ Այսպէս «Կոմիւթ» դասակարգին պատկանող իգական սեռի անդամն Կոմիւթ-Գոր կ'անուանեն, նոյնպէս ալ «Կոոքի» դասակարգին պատկանող իգական սեռի անդամն Կոոք-Գոր կ'անուանեն։ Իւրաքանչիւր Կոմիւթ ծննդական իրաւունքով իւրաքանչիւր Կոոքի-Գորի ամուսինը կը համարուի. իւրաքանչիւր Կոոքի իրաւունք ունի օրինաւոր ամուսնական յարաբերութիւն կազմել իւրաքանչիւր Կոմիւթ-Գորի հետ։ Ամուսնութիւնն հաստատելու ժամանակ սըսակի ծէսեր, արարողութիւններ տեղի չեն ունենար, որովհետեւ կինը այսօր մարդու մը կ'երթայ, վաղը զայն կը թողու և ուրիշ մը կամ մինչեւ անգամ քանի մ'ամուսնաներ կ'առնու. բոլոր այս պարագայից մէջ ամուսնութիւնն անսխալման կերպով օրինաւոր կը համարուի և նոցա բարոյական դադարաց անհամապատասխան չէ, եթէ միայն այր և կին տարբեր դասակարգերու կը պատկանին։ Միւս ցեղերու, զոր օրինակ Կոմիւրոյներու մէջ, յարաբերութիւններն արդէն քիչ մ'աւելի բազմաբնակ կալմակերպութիւն մը կը ներկայեն. երկուքի տեղ չորս դասակարգ կազմուած է, Իսայ, Կոմբու, Մուրի և Կուրի։ Իսայ և Կոմբու դասակարգերը միևնոյն դասակարգի վերջին ժամանակուան կրկնարած անունը կը ներկայեն։ Մուրիները եւ Կուրիները նոյնպէս առաջ անբաժան դասակարգ մը կը կազմէին։ Այս պատճառաւ իւրաքանչիւր խմբի ամուսնական իրաւունքները քանի մը փոփոխութեանց ենթարկեցան։ Առաջուան ժամանակներն իւրաքանչիւր Իսայ-Կոմբու կարող էր ամուսնանալ Մուրի-Կուրիի իւրաքանչիւր կնոջ հետ, մինչդեռ նոր կրկնարած անունէն յետոյ Իսայ խմբի անդամը Կուրի խմբի կնոջ հետ միայն ամուսնանալու իրաւունք ունի, Կոմբու խմբի այր մարդն ալ Մուրի խմբի կանանց հետ։ Իսայ և Կոմբու խմբերու մէջ ամուսնութիւնն արգելեալ է, որովհետեւ երբեմն դո՛ւրս մի դասակարգ կը

կազմէին, նոյն պատճառաւ ալ Մուրի և Կուրի խմբերու մէջ արգելեալ է ամուսնական կապ հաստատել. այսպիսով կը հետևի որ, չորս դասակարգերէն իւրաքանչիւրի այր մարդիկը միայն մէկ դասակարգին պատկանող կանանց հետ ամուսնական կապ հաստատելու իրաւունք ունին։

Աւստրալիացեաց մէջ ամուսնութիւնը դաշնակցական հանգամանք չունի, այլ իւրաքանչիւր անդամի ցեղական իրաւանց վրայ հաստատեալ պարզ գրութիւն մ'է։ Կոմիւթը կամ Կոոքին այնքան կին կ'առնու որքան իւր նիւթական միջոցը կը ներէ զայն սնուցանելու համար։ Երբ Սուրի դասակարգին պատկանող այր մարդ մը հանդիպի Իսայ դասակարգին պատկանող կնոջ մը, իւր կինը կ'անուանէ զայն, իսկ կինն ալ իւր ամուսինը կ'անուանէ մարդը. և եթէ այր մարդը մտադիր լինի այն կինն իրեն իրեւ ամուսին ունենալ, ամեն մարդ նորա իրաւունք ունենալը կը խոտոտվանի։ Քանի մը ցեղերու մէջ կինը չափահաս մարդոց համար իբրեւ մենալուծաւ կը ծառայէ. մեծ ժողովներու կամ տոն օրերու մէջ ալ այր մարդիկ պարտաւոր են իրենց կանայքը ցեղի երիտասարդներուն շնորհել առ ժամանակ մի, ըստ որում դասակարգերու ամուսնական յարաբերութիւնն հաստատող հիմնական օրէնքն այնպէս կը տրամադրէ։ Այս տակաւին չը մոռցուած ամուսնական օրինաց արգելքութիւնը կ'երեւի և այնտեղ ուր ամուսնական աւելի սերտ կապեր հաստատուած են. այսպէս, օրինակի համար, ցեղի մը մէջ սովորութիւն կայ որ փեսայի դասակարգին պատկանող այր մարդիկ իրենց իրաւունքը կը յայտնեն նորահարսի վրայ, զայն վայելելու համար։ Կան ցեղեր որք միմեանց կիներ կը յափշտակեն, ինչպէս Կոմիւրոյները և նոցա նման ցեղեր. այսպիսի առեւանգումը սովորական բռնութեան նկարագիր չի կրեր, այլ առաւելապէս ընտանեկան իրաւանց բռնաւորական ցայց մ'է որ բոլոր ցեղին վրայ կը տարածի առեւանգիչը իրաւունք ունի առեւանգեալ կնոջ վրայ, ոչ թէ առեւանգելու տեսակետէն նայելով, այլ բոլոր ցեղերու կողմէն ընդունած օրէնքին զօրութեամբ. իսկ եթէ մին առեւանգէ այն դասակարգի կինն որու հետ ամուսնական կապ հաստատած չէ, ոչ

որ իրաւունք չի տար նմա որ առեւանդեալի հետ ամուսնական յարաբերութիւն հաստատէ կամ իւր քով պահէ զայն: Երբ զորաց ջոկատ մը թշնամի ցեղի մը վրայ յարձակելու ժամանակ կին մը գերի բռնէ, այն բոլոր մարդիկ որք յայնչտակման դործին մասնակից եղած են, համահաւասար իրաւունք ունին առեւանդեալ գերի կինը վայելել և այս՝ նոյնպէս դատարարութեան օրինաց տրամադրութեամբ:

Այն ցեղեր, որ Կամիլարոյներու նման ցեղական կազմակերպութիւն ունին, այլապէս հիւրերու կամ բարեկամներու կ'առաջարկեն առժամանակ մի վայելել իրենց մօտ գտնուած այն դասակարգին պատկանող կիներն զորս վայելելու իրաւունք ունին: Ֆիզոն կը պատմէ թէ Մատըր Բրիճէմ տեղացի սպասաւոր մ'ունէր որ շատ անգամ ճանապարհորդած էր յԱւստրալիա: Այդ սպասաւորը կը հաստատէր թէ ինքը այլեւ այլ ցեղերու մէջ միշտ ժամանակաւոր ամուսիններ կը գտնէր իւր ուղեւորած ժամանակ: Նա միշտ կարող էր ապացուցանել թէ իւր առած կիները այն դասակարգին կը պատկանէին, որուն հետ ամուսնական յարաբերութիւն կազմելու իրաւունք ունէր: Այսպիսի օրինակներով, կը յաւելու Ֆիզոն, քանի մ'երեսներ կարելի էր լցնել: Երբոր Կուլմիթէն և Կրոքի-Գորէն արու զաւակ ծնի, նա մասնաւոր անհատի որդի չէ, այլ Կրոքի ամբողջ խմբի որդի կը համարուի: Իսկ եթէ աղջիկ զաւակ է ծնածը, Կրոքի-Գորի ամբողջ խմբի որդին կը համարուի: Բոլորիկ Կրոքին և Բորքիկ Կրոքի-Գորն իրարու քոյր ու եղբայր կը լինին, չը նայելով որ տարբեր ծնողներէ կրնան աշխարհ եկած լինել: Նոյնպէս Կրոքի խմբի սերունդի մը բոլոր անդամներն անհրաժեշտաբար եղբայր և քոյր կը համարուին միմեանց:

Աւստրալիացւոց օրէնքներն անհատականութեան յաջորդութիւն չեն ընդունիր: Կրոքի խմբի սերունդի մը բոլոր այր մարդոց որդիք ամբողջ խմբի որդիքը կը համարուին, նոյնպէս ալ Կրոքի-Գորերը: Ասկէ կը հետեւի որ Կրոքի խումբը հարազատ եղբայր կը համարուի Կրոքի-Գորի խմբի հետ և Աւստրալիացւոց բարոյական հասկացողութեամբ նոցա մէջ ամուսնական կապակցութիւն հաստատելն այսպիսի գաղանային

ոճրագործութիւն մ'է, ինչպէս որ ի մեզ միեւնոյն մեր որդւոց միջեւ սեռական յարաբերութիւն հաստատուելը: Աւստրալիացւոյ մը համար նոյնքան անկարելի է իւր դասակարգի աղջկան հետ պսակուիլ, որքան մեզ՝ մեր հարազատ քրոջ հետ: Եւ եթէ ցեղի անդամներէն մէկը մեզանչէ այս սուրբ սկզբունքի դէմ և ամուսնանայ իւր դասակարգի աղջկան հետ, ամբողջ բնակչաց վրայ մեծ սարսափ կը տիրէ, նոցա բարոյական զգացումը խորապէս կը վիրաւորի: Բոլոր հասարակութեան համար խիստ նախատինք մ'եղած կը համարուի: Մեզանչոյր կ'սպաննեն որպէս ցեղն անպատուող անձ մը, և եթէ այդպիսի յարաբերութենէ մը զաւակներ ծնին, նոցա նոյնպէս անխուսափելի մահ կ'սպասէ:

(Մնացեալ յաջորդ թիւով)

ՔԱՂՈՒԱԾ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐԱՅ

26 ՅՈՒՆՈՒԱՐ 1 ՓԵՏՐՈՒԱՐ 1885

ԱՐՏԱՔԻՆ

Ամերիկայի և Անգլիոյ մէջ մեծ աղմուկ յարուցած է Ամերիկաբնակ ծայրայեղ ֆէնիանաց գլուխ ՕՏօնօլան Ռոսայի կենաց դէմ եղած փորձը:

Տիկին Այլըզ Տըտլի անուն 28. ամեայ մանկամարդ կին մը, արհեստիւ դաստիարակուհի, հայրենասիրական զգացումէ մղուեալ, Նիւ-Եորքի փողոցներուն մէջ բէվոլվորի հինգ հարուածներ ուղղած է ՕՏօնօլան Ռոսայի վրայ: Բայց այս նոր «Շարլօթ Քօրտէյ» չէ կրցած սպաննել նոր «Մարա»ն: — Ֆէնիաններու պետն աղէկնալու վրայ է:

Տիկին Տըտլի նախ նամակ մը կը ղրկէ առ Ռոսա, զեկուցանող թէ կին մը կ'ուզէ տեսակցիլ իրեն հետ: Կը յարէ թէ այս կին համակրող է իւլանտական դատին, փափաքող է օգնել Ռոսայի ջանից, բայց չուզեր տեսնուիլ խմբադատան մէջ: (Պ. Ռոսա կը հրատարակէ Մնացեալ Իւլանտա Ֆէնիական թերթը:) Ժամադրութեան մը համաձայն, Պ. Ռոսա և Տիկին Տըտլի փո-

լիցքը կը տեսնուին : Տիկինը , խոստանալով մեծ գումար մը տալ իւր նպատակաց յաջողման համար , կ'իմանայ Ռոսայի գաղափարները . կը համոզուի թէ Լոնտոնի վերջին պայթմանց բուն հեղինակն է Ռոսա , որ ասոր համար պէտք եղած գումարները կը հաւաքէ Անգլիոյ մէջ , և կարգել կ'ուտայ յարմարագոյն անձերն՝ որոշեալ պայթուցիներն ի գործ դնելու համար :

Երկրորդ ժամագրութիւն մ'եւս կ'որոշուի , և այս անգամ Տիկին Ռոսա կը ներկայացնէ ընկալագիր մը , զոր ինք խմբագրած էր , և զոր Պ. Ռոսա պարտէր ստորագրել խոստացեալ գումարը Տիկին Տըտլիէ ստանալու և ուժանակային նպատակներու գործածելու համար : Մինչ Պ. Ռոսա այս թղթին պարունակութեան վրայ կը խօսէր , Տիկին Տըտլի բայլ մը ետ կ'երթայ , զրպանէն բէլով վրէպելով կը քաշէ և իրարու ետեւ հինգ անգամ արծակելով կը պարպէ զայն : Առաջին գնտակի հարուածին՝ Պ. Ռոսա՝ կրնակէն զարնուած , գետին կ'իյնայ , և այս գրից մէջ , որովհետեւ Տիկինը կարճատես էր արդէն , միւս չորս գնդակը պարապ կ'երթան : Իրիկուն էր , խուռն բաղմունքիւն կը հաւաքուի անմիջապէս : Պ. Ռոսա կը տարուի մերձակայ հիւանդանոց մը , ուր էր արդէն Պ. Ֆէլան , որ զարնուած էր Պ. Ռոսայի գրասենեկին մէջ իսկ , Ֆէնիաններու գաղտնիքը մատնելուն համար : Ֆէլան կ'ուրախանայ լսելով թէ զինք զարնելու ողջարագործն եւս նոյն սենեկին մէջ վիրաւոր կը պառկի : Բայց երբ կը լսէ թէ Ռոսայի վէրքը թեթեւ է , կը ցաւի յոյժ :

Իսկ Տիկին Տըտլի կը ձերբակալուի :

— Ֆրանսական պաշտօնական հեռագիրը որչափ ալ ոսկեղօծեալ զեկուցանեն չինական զօրաց հետ Ֆրանսական զօրաց կռիւներուն հետեւանքն , ակներեւ է թէ , պատերազմը քանի՛ երկարի , Չինացիք կը բարւոքեն իրենց դիմադրութեան միջոցներն , և առաջուան չափ թուլութեամբ տեղի չեն տար յարձակելոց առջեւ : Վերջին ճակատամարտներուն մէջ երկու կողմերն ալ փոքր առաւելութիւններ և փոքր սլարտութիւններ կրեցին :

Միւս կողմէ , կը ծանուցուի Ամերիկայէ թէ Չինաստան շարունակ գէնք և ուղմամթերք կը գնէ Սան Ֆրանչիսկոյէ , առանց

մեծ աղմուկ հանելու , և Ֆրանսական մարտանաւք չեն կրնար արգիլել առեւտրական դրօշի տակ Չինաստան փոխադրեալ այս պատերազմական պիտոյից յանձնումը : Միացեալ Նահանգաց Ֆրանսական դեսպանն այսու ամենայնիւ բողոք պիտի բառնայ եղեր ամերիկեան չէզոքութեան օրինաց այս բռնաբարման դէմ :

— Վիէնայէ կը հեռագրուի թէ գերմանական և ձեւական լեզուովք անիլխանական բաղմաթիւ յայտարարութիւններ փակուած են պատերու և ծառերու վրայ հիւսիսային Պոհլանդի այլ և այլ քաղաքացի մէջ , ուր կան տարազագործութեան մեծ մեծ գործարանք :

— Հռոմէ կը հեռագրուի թէ Վատիկանի և Գարատաղի միջեւ բանակցութիւնք պիտի բացուին՝ «իօնային ինչ ինչ առ կախ խնդիրներ» կարգադրելու համար : Յայտնի է թէ , Բոտկորիճայի յանձնումէն ի վեր , Գարատաղ կաթոլիկ Ալպանիացի հպատակներ ստացած է :

— Կ'երեւի թէ մեր յարգոյ պաշտօնակից , Թաբէ , իրաւունք ունի Կայսերական Կառավարութեան ուղադրութիւնն հրաւիրելու Ամերիկեան Տրիպոլիոյ վիճակին վրայ : Լոնտոնի լրագրաց առած տեղեկութիւններուն նայելով , «մեծ յուզում» կը տիրէ եղեր ի Տրիպոլիս , և արար Եէշիսեր ու պաշտօնատարներ ձերբակալուեր են Օսմանեան իշխանութեանց կողմէ : Իտալացիք շատ հուզեր գներ են : Պէնկազի նմանապէս գլըր գլըրեալ վիճակ մ'ունի եղեր :— Իսկ Իտալացիք չեն ուզեր որ ուղադրութիւն դարձելի Տրիպոլիոյ վրայ : Սգէֆանի գործակալութիւնն իտալերէն լրագրաց մէջ կը հերքէ անգլիական աղբիւրէ տրուած վերոյգլըրեալ լուրերը :

Ն Ե Ր Ք Ի Ն

Այս չորեքշաբթի օր ելաւ Կայսերական Իրատէն , որ կը վաւերացնէ Բ. Դրան որու շումն , որով Բուսէլիի երկաթուղեաց Սերպիոյ երկաթուղեաց հետ միացման գործը կը յանձնուի Օսմ. Կայս. Պանքային կազմած խմբակին , և ո'չ Պարոն Հիրչի :

— Կը լսենք թէ մայրաքաղաքիս անգ-

լիական Դեսպանատան գործակատար Պ. Ուինտհէմ՝ Պելլրատի (Սերպիա) անդլիական դեսպան անուաներ է :

Սակայն Պ. Ուինտհէմ տակաւին չպիտի մեկնի, և Կ. Պոլսոյ անգլիական նորընտիր դեսպան Սըր Էտուար Թորնթոնի գալստեան պիտի սպասէ իւր նոր պաշտօնատեղին ուղեւորելու համար : Սըր Թորնթոն մարտի սկիզբը մայրաքաղաքս կ'սպասուի :

— Թէեւ Տաղաքական Տեսչութիւնը տեղական լրագրաց արգիլեց խօսիլ Նգիպտոսի խնդրոյն վրայ, բայց Թուրք լրագիրք իրենց խմբագրական յօդուածոց մեծագոյն մասը կը նուիրեն Նգիպտոսի և Սուտանի գործոց :

— Կայս. կառավարութեան կողմէ ձեռք առնուած միջոցներուն հակառակ, Բէքթէ արտադրող այծերու յօտար երկիր փոխադրութիւնը կը շարունակուի այնքան մեծ քանակութեամբ, որ կը վախճուի թէ օր աւուր նուազի յիշեալ արտադրութիւնն ի Թուրքիա :

Հետեւաբար նորանոր միջոցներ ձեռք առնուեցան այս նպատակաւ : Յատուկ շրջաբերակոնաւ մը պատուիրուեցաւ բոլոր այն գաւառաց, ուր սոյն այծերէն կը գլուխուրդէին, թէ բացարձակապէս արգիլեալ է ծովու ճամբով փոխադրել զանոնք Թուրքիոյ մէջ կողմէն միւս կողմն :

Իսկ ցամաքի ճանքով փոխադրութիւնը ներելի է, պայմանաւ միայն որ հօտին տէրը երաշխաւորութիւն մը ցոյց տայ, ինչպէս նաեւ փոխադրութենէն յետոյ ստացագիր մը (իմուհապէր) այն տեղւոյն մաքսատունէն ուր փոխադրուին այծերն :

Այս ստացագիր ցոյց պիտի տայ թէ այծերն օտար երկիր չեն փոխադրուած : Իսկ եթէ փոխադրեալ այծերուն տէրը չը կրնայ այսպիսի ստացագիր մը ներկայացնել, պիտի կորուսանէ այն գումարը, զոր իբր տւանդ թողած էր :

— Նախընթաց օրը մայրաքաղաքս եկաւ Տէրքոսի ջրի ընկերութեան նախկին երկրաչափ Պ. Բանչիէրա :

Մոնիթէոր կ'ըսէ թէ՝ այս երեւելի երկրաչափն՝ որ այլ եւս որ և է յարաբերութիւն չունի Թէրնոյ պէյի ընկերութեան հետ, մտադիր է Վոսիորի Ասիական եզերաց անուշ ջրի աղբիւրներէն մայրաքաղաքս

ջուր բերելու արտօնութիւն խնդրել Կայս. կառավարութենէն :

— Թէրճէմանի Հադիդաթ ուրախութեամբ ծանուցանելէ յետոյ թէ քանի մը հրեայ դրամատեարք, որ մայրաքաղաքիս մէջ ապակեայ զանազան անօթներ շինելու համար ասկէ առաջ Կ. կառավարութենէն արտօնութիւն ստացած էին, այժմ գործարան հիմնելու համար յարմար տեղ մը կը կը փնտռեն, հրաւէր կը կարգայ Թուրքիոյ դրամատեարք, որ փութան նմանօրինակ օգտակար գործերու ձեռնարկել և այսպէս գործաւորաց դասուն աշխատութիւն հայթայթել ապրուստ չահեցնելու համար :

— Ատանայի մէջ բամպակի գործարանէ մը հրդեհ ծագելով՝ գործարանն ամբողջապէս հրոյ ճարակ եղեր է : Եղած փնասն 2000 ոսկի կը հաշուի :

— Տատանորդի և ոչխարի տրոց վերատեսչութեան հաշիւները քննելու համար Յանձնաժողով մը կազմուեցաւ Բ. Դրանքանի մը բարձրաստիճան պաշտօնատարներէն :

— 1300 տարին լրանալու մօտ լինելով, Կայս. կառավարութեան կողմէ աղդարարութիւն ուղղուեցաւ բոլոր պաշտօնական շրջանակաց, որպէս զի փութան իրենց հաշիւներն հաշուակալութեան դիւանին ուղարկել :

— Այս օրերս արտաքին գործոց պաշտօնատան մէջ յանձնաժողով մը կազմուեցաւ, հրաժարեալ հիւպատոսաց խնդիրը քննելու պաշտօնով : Այս յանձնաժողովոյ անդամք են՝ արտաքին գործոց նախարարութեան գլխաւոր պաշտօնատարներէն Րէֆէթ պէյ, Իպրահիմ պէյ, Զիա պէյ, Գարրիէլ Էֆէնտի Նորատունկեան և Գրիգոր Էֆէնտի Ստըրեան :

— Պարսկական դեսպան Միրզա Մոհսին խան այսօր Թէհրան կ'ուղեւորի արձակուրդով : Ն. Վսեմութիւնը Կ. Պոլսոյ մէջ ճարտարարուեստական գեղեցիկ նիւթեր գնելէ զատ, միանգամայն բաղում ծանրաքին գոհարեղէններ բերել տուած է Եւրոպայէն՝ Շահին նախարարաց և իւր բաւելիամաց ընծայելու համար :

Վսեմ Մոհսին խան Նէվրուզի տօնին անպատճառ ներկայ պիտի գտնուի ի Թէհրան :

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

— Նորընտիր Պատրիարք Ամեն. Տ. Յարութիւն Սրբազան հետեւեալ հեռագիրն էր ըն ուղղած է առ Ատենապետն Ազգ. Ժողովոյ Վսեմ. Տիգրան էֆ. Եղեւթեան և առ Քաղաքական Ժողովոյ, Ատենապետն Վսեմ. Սիմոն պէյ Մաքսուտեան :

Ա. Արեւնապէտն Ա. Զ. Ժողովոյ

Ընդունեցանք Դիւանիդ հեռագիրն: Շնորհակալ ենք Ազգ. Ժողովոյ վստահութեան որով կոչէ զմեզ ի Պատրիարքութիւն Կ. Պոլսոյ: Յետ խորին մտածման, պարտաւորութիւն զգացինք հպատակիլ Աստուածային կամաց և Ազգային Ժողովոյ տնօրինութեան:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ա. Արեւնապէտն Քաղաքական Ժողովոյ

Ընդունեցէք մեր շնորհակալութիւնները ձեր շնորհաւորութեանց համար:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

— Երկուշաբթի օրը Ն. Սրբազնութենէ հեռագիր մը հասաւ ի Պատրիարքարան, ուղղեալ առ Գեր. Պատրիարքական տեղապահն: Աւասիկ պատճէնը.

«Խորին շնորհակալութիւն Ազգային Ժողովոյ վստահութեան և Ձեր շնորհաւորութեան համար»:

Սոյնիմաստ հեռագիր մ'ալ հասաւ Նորին Սրբազնութեան դողմէ առ Ամեն. Տ. Եսայի Պատրիարքն Երուսաղէմի:

— Կը լսենք թէ, Պատրիարքական ընտրութեան վրայ Ազգ. Երեսփ. Ժողովոյ ըստորագրած Տեղեկագիրն, որ Գեր. Տեղապահ Հօր ձեռամբ Դատական նախարարութեան մատուցած էր, ինչպէս նաև նորընտիր Պատրիարքին անձնաւորութեան և անցեալ ծառայութեանց վերաբերեալ կենսագրական պէտք եղած տեղեկութիւնք Դատական նախարարութեան կողմէ ըստ օրինի մատուցուած են Բարձր. Մեծ-Եպարքոսին:

— Խառն Ժողովը իւր այդ նստին մէջ հարկ տեսաւ, ըստ տրամադրութեան Ազգ. Սահմանադրութեան Երեսփոխանական Ժողովոյ կարծիքն ու հաւանութիւնն առնուլ և ըստ այնմ հարկ եղած տնօրինութիւնն ընել

նորընտիր Ս. Պատրիարք Հօր ղրկուելիք հրաւիրակութեան մասին:

— Խառն Ժողովը գումարեցաւ այս չորեքշաբթի օր ի Ղալաթիա, ընդ նախագահութեամբ Պատրիարքական Գեր. Տեղապահ Հօր և ատենապետութեամբ Վսեմ. Մաքսուտ Սիմոն պէյի:

Ժողովը տեսնելով որ նորընտիր Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր նկատմամբ մայրաքաղաքիս լրագրաց ուսնց մէջ այլ ընդայլոյ և անտեղի հրատարակութիւնք տեղի կ'ունենան, և նկատելով որ այդ հրատարակութիւնք վիրաւորիչ են Ազգին համար, որ չկրնար հանդուրժել իւր հոգեւոր Դըւխտին դէմ եղած անարժէք և անտեղի հրատարակութեանց, որոշեց Թագրիր մատուցանել առ Բ. Դուռն և աղդուապէս բողոք բառնալ սոյն օրինակ հրատարակութեանց դէմ, յայտնելով Ազգին զգացած ցաւն, և խնդրել որ այսպիսի հրատարակութիւնք արգիլուին և օրինաց տրամադրութիւնը խստիւ ի գործ դրուի:

Այս Թագրիր երէկ Ներքին գործոց Բարձր. նախարարին մատուցուեցաւ, Պատր. Գեր. Տեղապահ Հօր ձեռամբ:

Մշոյ Գաւառական Խառն Ժողովը քանիցս առ Պատրիարքարան գրած և Առաջնորդ Ալեքսանդր Գրիգորիս Սրբազանի վերադարձը խնդրած լինելով, ցարդ չվերադառնալուն վրայ յուսահատ, կը հրաժարէր իւր պաշտօնէն:

Ժողովը որոշեց խնդրել Բ. Դռնէն, որ շնորհ ընէ թոյլ տալ Նորին գերապատուութեան իւր վիճակն երթալ և հոգեւորապէս մխիթարել իւր հօտը: Միանգամայն որոշեց զրել յիշեալ Ժողովոյ, որ ժամանակ մ'եւս չարունակէ զիւր պաշտօն, վստահ լինելով ընդ վոյթ կարգադրութեան իրենց առաջնորդական խնդրոյն:

— Թիֆլիսէն յունուար 15 թուով կը հեռագրեն Ռուսիէ Վեհաօսոյի լրագրին թէ, սարսափելի չարադորձութիւն մը երեւան ելած է: «Նովոյէ Արադքէնիէ» կ'ամբաստանէ այս չարադորձութեան մէջ Երեւանայ դատարանի դատախազ Ֆրէյդանդը թէ գաղտնի դաւաճանութիւն է կազմած քանի քանի մը բանտարկեցող հետ՝ անմեղ անձեր դատապարտելու համար: Դատախազին բանտարկեցող հետ ունեցած թղթակցութիւնները բռնուած են:

Յրէյգանդի այս Հարադործութիւնը կը վերաբերի «Երեւանայ անցքին» զոր Արեւելէ մանրամասնօրէն հրատարակեց ամիս մը առաջ :

Ի վերջոյ մեր ընդունած տեղեկութեանց համեմատ, Ռուսիոյ կառավարութիւնն աքսորիդատապարտեր է Երեւանի անցքերուն մէջ ամբաստանեալ հետեւեալ առաջնակարգ և նշանաւոր Հայերը .

Լեւոն Տիգրանեաց (քաղաքային բժիշկ Երեւանու), Ռուբէն Հասան-Ջալալեանց (փաստաբան), Սարգիս Բէդնազարեանց (Տեսուչ ազգային վարժարանաց), Մատակեանց, Տէր Զաքարեանց, Տէր Գրիգորեանց (Թատրերգակ բանաստեղծ), Թոմաս Մէհէրեանց, Տիկին Մատակեանց (քոյր Արձագանքի խմբագիր Պ. Արզար Յովհաննէսեանի և ընդհանուր տեսչուհի Երեւանայ օրիորդական վարժարանաց) :

Սքա կ'աքսորուին Անդրկովկասի այնպիսի քաղաքներ ուր Հայք սակաւաթիւ են :

Տիկին Մատակեանց և Տէր Գրիգորեանց երկուքական տարւոյ աքսորի, մնացեալք երեք տարւոյ : Պ. Մէհէրեանց միանգամայն երեք ամիս պիտի բանտարկուի :

—Ազգային ժողովն դռնփակ նիստ ըրաւ երէկ, ընդ տեսնապետութեամբ Վսեմ Տիգրան էֆէնտի Եռասօֆեանի, և յետքանի մ'ատենական դործողութեանց կարգադրութեան, Յ. Մէրեմ-Պուլի էֆէնտի կողմէ ներկայացեալ հետեւեալ Բանաձեւը բուհարից թի գէմ 50 բուհով :

«Ազգային ժողովն Ս. Երուսաղէմայ պարտուց բարձման մասին Վարչութեան Տեղեկագրոյն շրջապէսաց տեսութիւնքը դնահատելով, կ'ընդունի Ստեփանեայ Դիւանի եղբակացութիւնքն, և կը յանձնարարէ Վարչութեան ի դործ գնել ըստ այնմ Երուսաղէմայ պարտուց բարձման առաջարկն, պարտաւորի ընելով յետեւ Պոլսեցւոց բաժինն» :

—Կը լսենք թէ Ամեն Տ. Եւայի Ս Պատրիարքն որոշած է երուսաղէմ վերադառնալ, հաւանօրէն նոյն շաբաթաւոր որով ճամբայ պիտի ելնէ նորընտիր Պատրիարքը Կ. Պոլիս բերելու պաշտօն ունեցող Պատուիրակութիւնն : Արդիհետեւ

յոյս կայ թէ Ազգային ժողովը չպիտի յայտարարէ վերջնական որոշում մը տալ Երուսաղէմի պարտուց խնդրոյն վրայ, Ամեն Տ. Եւայի Պատրիարքին յերուսաղէմ վերադարձը դիւրացած պիտի լինի . մինչ Ամեն Տ. Յարութիւն Երբաղանին Երուսաղէմէ մեկնումը, միւս կողմէ, անհրաժեշտ հարկ կը ցուցնէ Ամեն Տ. Եւայի Պատրիարքին ներկայութեան յերուսաղէմ :

—Թէրճեմալ Հաջէֆի իւր երէկի թուով ալ հետեւեալը կը գրէ մեր Պատրիարքական ընտրութեան առթիւ .

«Հայոց նորընտիր Պատրիարք Յարութիւն Սրբազանի վրայ մեր հրատարակած յօդուածըն Հայոց մեծադոյն մասին կողմէ հաճութեամբ կարդացուած է, բայց փոքրամասնութեան մը տհաճութիւն պատճառած է : Այս փոքրամասնութիւն մեզ գէմ վտացեր է, որովհետեւ առ Կայս. կառավարութիւնն հաւատարմութեան զգացումէն զուրկ նկատած ենք զինք : Արդիհետեւ այս վիշտ հաւատարմութեան զգացումէն ծաղում կ'առնու, շնորհաւորութեան արժանի է :

«Բայց մեր յիշեալ յօդուածը դրած ենք ո՛չ մի կողմը դո՛ւ ընելու, ո՛չ ալ միւս կողմը դժգոհացնելու գիտամբ . այլ մեզ կէտ նպատակի ունեցած ենք հանրութեան օգուտը միայն . ուստի, մեր դիտողութիւնն երէ վշտացողներ դո՛ւ պէտք է լինին մեր անկողմնակալութենէ : Կը կրկենք թէ, երբ Հայ ժողովուրդն 100ին 80 համեմատութեամբ բուհով մը յԱթոռ Պատրիարքութեան կը կոչէ Յարութիւն Սրբազանի պէս եկեղեցական մը, որ իւր մարդասիրութեամբ, հաւատարմութեամբ և հայրենասիրութեամբ բարի համբաւ ստացած է, այս իրողութիւն յոյժ թանկագին կը լի մ'է, որով կարող ենք չափել Հայ ժողովրդեան առ Կայսերական կառավարութիւնն համակրութիւնն ու հաւատարմութիւնը : Մեր դիտողութիւններէ վշտացող փոքրամասնութիւնն ևս, եթէ անկեղծապէս կը պնդէ իւր հաւատարմութեան զգացմանց վրայ, պարտի արդեամբ ապացուցանել զայն» :

«Այս Պատրիարքական ընտրութեան դործին առթիւ ուրիշ լուրեր ևս կ'առնուենք այն» :

պիտի անձանց նկատմամբ, որոց վրայ բռնաւ չենք ուղեր որ այդ տեղեկութիւնք ստուգուած լինին: Այս պատճառաւ չենք հրատարակեր զայն: Այլ որ թշնամութիւն կը տածեն Հայոց փոքրամասնութեան դէմ, անոնց անկէ արձագանգ տալ այդ գրոյցներու: Իսկ մէք թշնամութեան զգացումն հակառակ նկատելով, անկողմնակալութեան առաքինութեան, այդ կարգի ամբաստանութիւնները չենք կրնար ակործով լսել և հիւրընկալել մեր էջերու մէջ:»

— Երէկ մայրաքաղաքիս բոլոր հայ եկեղեցեաց մէջ ըստ սովորութեան պատշաճ շքով կատարեցաւ Վարդանանց զօրավարաց նահատակութեան աղգային եկեղեցական տօնը: Միակ բացառութիւնն եղաւ Գումգալուի Պատրիարքական Մայր-Եկեղեցին, ուր եկեղեցական հանդէս ալ չկատարեցաւ, Լուսարարպետ Տ. Սուքիաս քահանայի քմահաճ մէկ տնօրինութեան շնորհիւ: Կրօնական ժողովն, ըստ սովորութեան արգիլելով հանդերձ դիպրոցական հանդէսներն, հրաման տուած էր որ եկեղեցեաց մէջ Վարդանանց տօնի օրը կատարուած կրօնային սլաշտամունք ի դուրս դրուին: Նոյն հրամանը տուած էր նաեւ Գեր. Տեղապահ Հայրը: Բայց յիշեալ Լուսարարպետը ժամերգութեան պահուն դպրաց դասուն և քահանայից արգիլած է Վարդանանց տօնը կատարել: Կը լսենք թէ թաղական Խորհուրդն և թաղեցիք իրաւամբ զայրացած են Լուսարարպետի մը այս տարօրէն ընթացքին դէմ, որոյ վրայ Կրօնական ժողովոյ ուշադրութիւնը կը հրաւիրենք:

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Եգիպտոսի գործոց վրայ չիօսելու արգելքը կը շարունակէ. ուստի, թէ և Ռիւդերի գործակալութիւնն երէկ շատ կարեւոր և մօնրամասն հեռա-

դրեր հաղորդած է մեզ, վերաբերմամբ Կորսոն զօրավարի սպանման պարագայից, անգլ. բանակին շարժմանց և Լոնտոնի կառավարութեան տնօրինութեանց, բայց տեսնելով թէ այս աւուր թուրք լրագրերն ալ չեն հրատարակած այդ հեռագրեր, զանց կ'ընենք և մեք, յուսալով թէ արգելքն երկար չի տեսեր: Տեղական մամուլը միահաճաւու այս շնորհը կը հայցէ Կայսերական Կառավարութենէն, որ կը յուսանք թէ չպիտի զլանայ զայն:

Վ Բ Ի Պ Ա Կ

Մասիս վերջին թուով հրատարակեալ Վսեմ. Գ. Օտեան էֆէնտիի յօդուածի մէջ հետեւեալ տաղարկան սխալները սպըրդած են: «624րդ երես, 8րդ տող, «նոյն և նման ինչպէս մենք տղայ եղաւ ենք» պիտի լինի «նոյն և նման ինչպէս մենք տղայ եղաւ ենք»: 626րդ երես, 48րդ տող, «արիւնասպարաւ շնաղայլին իր էջն առնութիւն» պիտի լինի «արիւնասպարաւ շնաղայլին իր էջն առնութիւն»: 628րդ երես, 46րդ տող «խառնաց մասն ունենալ» պիտի լինի «խառնաց մասն ունենալ»:

ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏՈՒՅ

Վ.Ս.ՐԱՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

1885, Փետր. 1/15 յետոյ Օսմանեան Հանրային Պարտոյ հին արժեքիցնց Միացման և Արշահապետի Կանոնադրէն

Յօդ. 1. Միացումը պիտի մտնուի 1885 մայիս 1/15ին եւրոպական ամեն քաղաքաց մէջ, ի բաց առեալ Կ. Պոլիս, ամեն դասակարգի արժեթղթոց հաճար, արձանագրեալ, դրոշմեալ, Բառապանք կամ ուրիշներ: Այս թուականէն յետոյ, միացումը միմիայն Կ. Պոլսոյ մէջ պիտի կատարուի:

Յօդ. 2. Արձանագրումը Եւրոպայի բոլոր քաղաքաց մէջ պիտի մտնուի 1885, փետր. 1/15ին: Այս թուականէն յետոյ, միմիայն Կ. Պոլսոյ մէջ պիտի կատարուի:

Յօդ. 3. Միանշալու կամ արձանադրուել-
լու համար Պոլիս զրկուած արժէթ զթող լիւ-
խադրութեան և ետ զրկուելու ծախքերն
արժէտեարց յիւրյ են :

Յօդ. 4. 1883, մարտ 1/15-ի հրդեհին և
յաջորդները պիտի վճարուին միայն միաց-
եալ պարտուց նոր արժէթի դիպց կամ արձա-
նագրեալ արժէթի դիպց վրայ :

Յօդ. Ծ. 1885, փետրվար 1/15էն յետոյ
միացման համար ներկայացուած այն արշ
ժէթուղթերն, որք ո՛չ արձանագրեալ և ո՛չ
դրուցեալ են, մինչեւ ներկայացման թուա
կանն իրենց ընկած կարգներուն վրայ իրա
ւունք չսխալուեն ։ Նոյնը սխալ լինի
նաեւ 1885 փետրվար 1/15 էն յետոյ ար
ձանագրման համար ներկայացուած Բա
մազան արժէթղթոց տոկոսեաց մասին ։

Յօդ. 6. Երբ որ արձանագրեալ արժէ-
թուղթք միացման համար ներկայացուին,
փոխարէն տրուած նոր արժէթղթոց ըն-
կած կարոնները սլտի խզուին, եթէ կ'
համապատասխանեն ներկայացեալ արժէթղթոց
կարոններուն :

Յօդ. 6. Արձանագրման և միացման դոր-
ժողովի իւնք առժամայէս պիտի դադրին
ամեն վեցամեայ պայմանաժամու նախըն-
թաց տասնհինգ աւուրց միջոցին, և այդ
պայմանաժամուն հետեւեալ օրն իսկ պիտի
վերսկսին :

Այս արամադրութիւն ի դործ պիտի
դրուի միայն 1885 սեպտեմբեր 1/15 ի պայ-
մանաժամանակ նախընթաց կիսամեկէն սկսեալ :

Յօդ. 8. Ոսանեան հանրային պարտուց
վարչական խորհուրդն իրեն կը վերագահէ ու
րոշել, կայսերական կառավարութեան հետ
միաձայնութեամբ, թէ՛ արձանագրման եւ
թէ՛ միացման վերջնական պահովը :

4. *Меліт*, 1885 *жылдың* 10/22

ՕՍԿԱՆԵԱՆ Կ. ՊԱՆԻՍ.

Օտևանէ ան տրժ էթ ուղթք «5 0/0 Բրիտրիթ է»

«Բրիտրիթէ» Օսմանեան արժէթուղթ
ունեցող տեարայ կը ծանուցուի որ թիւ
6 կտրոնն ի վերջին վիճակահանութե-
նէն ելած արժէթուղթը պիտի վճա-
րուին Օսմանեան Կ. Պանքայի Պոստոյ

Ճիւղէն, (ի Թարաքճըլար) յառաջիկայ
Մարտ 1/13էն սկսեալ:

Կարո՞նք երան հարգէ՞լ թոյ հետ
պէտք է ներկայացնել տնոյց ի՞նչերը
նշանակող ցուցակ մը : Վճարմանը պի-
տի լինին միմիայն երեքշաբթի և ուր-
բա՞ր՝ օրերը :

4. Պոլիս, 12. փետրուար 1885

4-13

ԱՐԵՎԷԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ


Արեւեան երկաթուղեայ Տնօրէնութիւնը կը ծանուցանէ հասարակութեան թէ սովորական կառավարմանը ուղղութեամբ վաճառաց և բեռաց ծանրութիւնը, որ ընդհանուր սակադնով 30 քիլոկրամ որոշուած է, յառաջիկայ մարտէն սկսեալ 30 քիլոմէթր պիտիջնէ մինչև ի նոր տնօրէնութիւն :

Սոյն թուականէն սկսեալ 30 քիլո-
կրամէն աւելի ծանրութեանց սակա-
դներն՝ փոխանակ 50 քիլոկրամի՝ 10ա-
կան քիլոկրամի անբաժանելի կոտորակ-
ներուն համեմատ պիտի հաշուին :

Ամեն անոնց որք կը տառապին
լսանսորս-լեւեմբ , մեանոց կարկառ-լեւեմբ և
ջշգլն ցաւերով , կը յանձնարարենք Տօք-
թոր Ալպէրի տիեզերահռչակ և գրեթէ
հրաշալի դուրս թիւնը : Ուրեմն բոլոր
հիւանդներն աշխարհ շարահան-լեւեմբ դիմեն
Տօքթոր Ալպէրի , փարիզ , Բլաս տիւ
թրոն , 6 , և անոնցմէ շատեր պի-
տի գտնեն իրենց առողջութիւնը զոր
ձեռք բերելէ յուսահատած էին : Բժըշ-
կութիւն թղթակցութեամբ , հիւանդու-
թեան մանրամասն պատմութիւնն հա-
ղորդելէ յետոյ : Տօքթոր Ալպէր գրա-
մը կ'ընդունի լաւ արդիւնքներ տես-
նուելէ յետոյ միայն :

ԽՍՊՈՐՆԻ ՅՈՐԵՆ ՀՆՁՈՂ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԵՔԵՆԱՅՆ

Օրը 38,000 քա.
 ուսկուսի կանգուն,
 այսինքն 55 քեմի-
 կը հնձէ, ծանրու-
 թիւնն է 280 օխայ
 Մանրամասն տեղի
 կութեանց համալ
 դիմել առ ընդհա-
 նուր դործակատար
 Մկրտիչ և Յովհաննէ,
 Մուրատեան եղբայր
 Կալաթա Եօրկանձը-
 լար ճատախի թիւ
 70 և Պոլիս, Ֆինճանձըլար Եօրուշը, Եռասուփեան խանի դիմաց թիւ 22:



ՏՈՔԹՈՐ Տ. ՊԱՊԱՆԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել Սրգոյ հասարակութեան թէ՛ ամեն Երեք-
 շաբթի, Հինգշաբթի և Շաբաթ օրեր կէս օրէն ժամ մը վերջը կը դանուի
 Մեծ Մաքսատան դիմաց Ա.Լ.Է.Ֆ.Ե.Ն. դեղարանն, ուր իրեն դիմող ամեն
 հիւանդներն և մասնաւորապէս մանկանց և միզանցքի ամեն տեսակ հիւան-
 դութեանց ենթակայ եղողները կը դարմանէ:

Հինգշաբթի օրերը ճրի է:

ԳՈՒԻՆ

ԱՆԳԼԻԱՆԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵ ՀԻԴԵՄ

ՌԸԼԻԷՆՍ

Ծովային ապահովագրութիւն: -Դիմել առ դործակատարն ընկերութեան, Պ.
 Ժ. Վ. Ուիթալ, Եօրկիտաթի խան Պահչէ - դարու, Պոլիս, կամ Ղալաթիա,
 Ալէքսիատի խան թիւ 13:

Սրտոնաւէր

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՅ